

Նարեկ արք. Ալեկմեղեան

# ԼՈՒՍԱԶԳԵՍՏԵԱԼ

Լաւալ – Քանաուա  
2026

ԾՆՈՂՔԻՍ՝  
ՅԱԿՈԲ ԵՒ ՄԱՐԻ ԱԼԵԿՍԵՉԵԱՆԻՆ

## «ԼՈՒՍԱԶԳԵՍՏԵԱԼ»-Ի ԼՈՅՍԸ

Հոգեւոր կեանքի ուղին ընտրած, հոգեւոր կոչումին նուիրուած եւ իր կեանքի իմաստը հոգեւոր գործունէութեան մեջ գտած անձնաւորութիւնը վստահաբար աշխարհն ու մարդկային կեանքը տեսնում է այլ, սովորականից տարբեր լոյսի ներքոյ: Կրօնական զգացումով համակուած իր ներաշխարհի թելադրանքով նա շրջապատող աշխարհը, մարդկանց, իրերն ու առարկաները տեսնում է մարդկայնութեան, բարութեան, մարդասիրութեան, եղբայրութեան եւ անսահման ներումի լոյսով օծուած:

Այդ լոյսը հասնում է ամեն մի մարդու իր կեանքի որոշ, եթէ չասենք հազուագիւտ պահերին ու ակնթարթներին: Միայն թէ ամեն մարդ չի զգում այդ լոյսի զօրութիւնը: Եւ եթէ պարզ մարդու համար այդ պահերը յաճախադէպ չեն եւ երբեմն էլ՝ զուտ պատահական, ապա հոգեւոր ծառայութեան կոչուած մարդու համար դրանք առօրեական են եւ կոչումնային:

Հոգեւորականի մշտական ուղեկիցները, արթուն պահապանի նման, հոգեւոր ընտիր գրականութեան լուսաւոր տողերն են: Իր ներաշխարհի խորերից, ըստ պահի թելադրանքի ու ըստ պատշաճի, ճառագելով գալիս են սաղմոսների, պատարագամատոյցի, շարականների, ժամագրքի, աւետարանիչների պատգամներն ու յորդորները՝ դառնալով հիմք եւ ելակէտ կրօնական հոգեվիճակների, խոհերի եւ ապրումների համար: Այդ խոհերը կարող են վերածուել գրական մտածումների, որոնց որոշակի հերթագոյութիւնը ներքին ամբողջականութիւն է ստեղծում:

Նարեկ արքեպիսկոպոս Ալեէմէգեանը տարիներ շարունակ գրի է առել իր կրօնական զգացումներն ու ապրումները, որոնց ընտրեալ հատուածները ներկայացնում է առանձին գրքով: Փաստ է եւ իրողութիւն, որ մեզանում կրօնական բովանդակութեամբ գրականութիւնը ցաւալիօրէն շատ սակաւ է: Եւ մենք այսօր, մեր ազգային-քաղաքական կեանքի դժուարին, ուղղակի տագնապային ժամանակներում, այնուամենայնիւ կարիք ունենք քրիստոնէական ոգով համակուած գրականութիւն: Հաւատում եմ, որ այն մեզ կդարձնի աւելի հաւատաւոր, ներքուստ աւելի ուժեղ, աւելի զօրաւոր, աւելի կայուն եւ անպարտելի:

Այս գիրքը վստահաբար կգտնի իր ընթերցողին:

Երուանդ Տէր-Խաչատուրեան

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՎ

## ԱՌՕՐԵԱՅ

«Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա»  
(Նահապետ Ռուսինեան)

— «Նարինջը համո՞ւլ է», հարցուց մայրս.

== «Նարինջը անո՞ւշ է», պատասխանեց հայրս.

=== «Նարինջը ո՞չ անուշ է ո՞չ ալ համով է», հաստատեցի ես:

Մեր օրը այս խօսակցութեամբ սկսաւ: Հեռատեսիլը պատերազմ եւ ձիւնամրրիկ կը գոռար...

**Երանի՛ առօրեայով ապրողներուն:**

Նարինջ – Չորք-Մարգպան... Ծնողներ–մեծ ծնողներ... Կայք, տեղաշարժ, սփռում. Միացման օղակ, հոգեկամուրջ, մտակապ, ինքնահաստատում: ... Եւ կերանք նարինջը:

— «Նարինջը համո՞ւլ է», մայրս աւելի քան տասը անգամ հարցուց այսօր: Չէինք գիտեր, որ *ալգայմըր*-ը սկսած է:

Մոռնալը յիշելը ամբողջական մոռացում չէ: Մասնակի յիշեցումը կամ ամեն բան մոռնալն է մտահոգիչը՝ ենթակային անմիջական շրջապատին համար:

Մարդ ենք, ասոր ալ վարժուեցանք...

Մոնթրէալ, 20 փետրուար 2014

## ԱՌԱԻԵՆ ԿԵԱՆՔ

*Հօրս եւ մօրս ութսունեօթ ամեակին առթիւ*

Ութսունեօթ եւ ութսունեօթ — երկու ութսունեօթ:

Կեանք չէ այլեւս, այլ՝ գոյութիւն մը, ըլլալ մը, քաշկոտութիւն մը, փզիկ-փզիկ փուլ եկող շէնք մը. քայքայուող երկու էակ:

Ամեն բան ետեւ մնաց. առջեւը միայն մահուան սպասել մը կայ. ան ալ որքան շուտ գայ՝ այնքան ն լաւ:

Երկիսօսութիւն՝

— «Այսօր գլուխս շատ կը ցաւի կոր»:

== «Իմա ալ շատ կը ցաւի կոր, կ'անցնի»:

— «Գլխու ցաւի հապ-ս տուր. չանցնի նէ նըրս-ը կանչէ»:

== «Լաւ. երկա՛ր ըրիր. կ'անցնի ըսի. կ'անցնի՛»:

Ամբողջ օրը, օրեր, շաբաթներ, ամիսներ, — արդեօք տարինե՞ր ալ, Աստուա՞ծ իմ— ա՛յս է նիւթը իրենց կեանքին: Կեանքի՞ն...

Ամբողջ կեանք մը՝ մինչեւ ութսունեօթ. Պէյրութէն Մոնթրէալ՝ հաւատացին իրենց Քրիստոսին, ամեն կիրակի եկեղեցի գացին, ամեն օր աղօթեցին՝ յուսալով, որ իրենց դառն կեանքը կը փոխուի:

Հիմա այլեւս միայն **առաւել՝ կեանքի** յոյսը մնացած է:

Յոյսէն անդին այդ կեանքը կա՞յ...

Լաւալ, 31 յունուար 2017

## ԾՆՈՂՔԻՍ

Փետրուար 2017-էն ի վեր Մոնթրէալ կը գտնուիմ՝ ծերացած ծնողներս խնամելու համար: 1997-ին անոնք Մոնթրէալ հաստատուեցան, եւ ահաւասիկ առողջապահական պատճառներով իրենց բնակած յարկաբաժինէն ստիպուեցան հեռանալ: Անոնք նախ ապաստան գտան ինքնավար ծերանոցի մը մէջ եւ ապա հիւանդանոց-ծերանոց մը փոխադրուեցան՝ սպասելով իրենց վերջին կայքին: 11 տարեկանիս Անթիլիասի դպրեվանք մտած ըլլալով՝ երկար տարիներ ետք ինծի համար նախախնամական եղաւ հօրս եւ մօրս հետ ունեցած ամենօրեայ շփումս: Այս խոհերը արդիւնք են այդ եզակի շփումին....:

## ԾՆՈՒՆԴ

Ծիլեր, ծաղիկներ՝ ծառ մը.

Նաշխուն նուէր՝ նռագոյն.

Ուսում-որկոր՝ ժպիտ.

Նաւարկութիւն առօրեայ՝ յոյս.

Դարձդարձիկ ընթացք... եւ փթթում:

## ԿԵԱՆՔ

Կենս-աղամ, կենս-ատամ .

Եւայի սերնդափոխութիւն.

Աղամի սերուցք.

Նոր-հին օրեր.

Քաղցր-դառն յուշեր... եւ քուն:

## ՅԱԻ

Յորենի ցանք.

Ամուլ արցունք.

Վշտալից սպի... եւ մեկնում անդարձ:

## ԸՆՏԱՆԻՔ

Ընթացիկ առօրեայ.

Նամակի սպասում.

Տուն ջերմ.

Ակամայ բաժանում.

Նոր օճախ.

Իրիկնային կեանք.

Քանդում... եւ անկում:

## ԱՌԱՆՁԻՆ

Աւարտ կեանքի.

Ռահ մոլար.

Անցեալ հեգնոտ.

Նեղսիրտ ճիչ.

Չանձրոյթ մնայուն.

Իրականութիւն դառն.

Նաւ խորտակեալ...

Լաւալ, 1 հոկտեմբեր 2017

## ԱՆՈՒՆԷՆ ԱՆԴԻՆ

*Ընտանեկան*

### ՄԱՐԻ

Մարիամ՝ սուրբ մայր.

*Այլ՝ Մարիա.*

Բախ-տրտում գգուանք.

Իրաւ սէր... պաշտում:

### ՅԱԿՈԲ

Յարատեւելու տագնապ.

Աղօթական կեանք.

Կամարակապ թափառում.

Որակ եւ քանակ օրեր.

Բարի ճանապարհ... առ Հայր:

### ՄԱՆՈՒԿ

Միակը՝ Մարդանալ.

Ազնուանալ.

Նուիրուիլ.

Ուրախանալ.

Կեանքը ապրիլ... կարօտալից:

### ՆԱՐԵԿ

Նոր հորիզոն.

Աստուած գտնել.

Ուրախութիւն վճիտ.

Երկնառաք հրճուանք.

Կեանք... սրբաձիգ:

Լաւալ, 2 հոկտեմբեր 2017

## ԱՍՏՈՒԱԾ

Հայրս եւ մայրս՝ հաւատքի սափոր, յոյսի աշտանակ, սիրոյ աւազան, քրիստոնէական կեանքի աւանդատուն:

Հայրս «Հայր մեր»-ը կը մրմնջէ, մինչ մայրս ամեն օր քանի-քանի՝ անգամ կ'երգէ. *«Փառք քեզի, ո՛վ Տէր, կրկին ու կրկին»*, եւ ապա կը դիմէ իր Տիրոջ. *«Ֆինճան-ի պէս էին աչքերս. մէկ աչքս զնաց արդէն, միւս աչքս եւ կեանքս միասին առ»*:

Կեանքի մէջ շատ մը բաներէ աւանդաբայ Բաժնուեցան. մնացին միայն իրենց զաւակը եւ Աստուածը՝ կեանքը, սէրը, կապը: Սիրտին յիշածները չեն մոռցուիր...:

Օր մը իրենց Աստուածը զիրենք իր մօտ պիտի կանչէ՝ յաւիտենական կեանքի վայելքին համար: Հիմա միայն անո՞ր կը սպասեն...

Լաւալ, 3 հոկտեմբեր 2017

## ՏՈՒՆ

Այսօր Քանատայի Գոհաբանութեան օրն է:

Մայրս եւ հայրս այս տօնը առաջին անգամ ըլլալով իրենց տունէն դուրս՝ *Շնորհակալութեան Աստուածամայր* ծերանոցին մէջ առանձին պիտի նշեն, *Քաղցր փոքրիկ դէմքեր* մանկապարտեզին հարեւանութեամբ:

Շնորհակալութիւն Աստուածամայր՝ քաղցր փոքրիկ դէմքերուն համար, որոնց միշտ կը նայինք եւ յաճախ չենք տեսներ...

Մայրս եւ հայրս, տունին կարօտով, ամեն օր այսպէ՛ս կը զրուցեն իրարու հետ.

— *«Լաւնալէն յետոյ ուրիշ տեղ պիտի չերթա՞նք այլեւս. տուն չունի՞նք».*

== *«Հոս է տունդ. ուրիշ տուն չի՛ մնաց».*

— *«Հոս տուն չէ. հիւանդանոց է».*

== *«Հիւանդանոց չէ. ծերանոց է».*

— *«Հիւանդանոց-ծերանոց է».*

== *«Ծերանոց-հիւանդանոց է».*

Ապա մայրս ինծի կը դառնայ.

— *«Միբտէս կ'երթայ կոր. սիրած ճաշերդ չեմ կրնար կոր եփել: Եթէ հոս պիտի մնաս, երկու սենեակնոց տուն մը վարձենք, միասին ապրինք. մէկ սենեակը մեզի եւ մէկ սենեակը քեզի: Միասին կ'ապրինք, կ'եփենք, կը թափենք»:*

Հայրս եւ մայրս գոնէ ծերանոց-հիւանդանոց տուն ունին:

**Ա՞յս է տունը...**

Լաւալ, 9 հոկտեմբեր 2017

## ԱՊՐԻՄ-ՄԵՌՆԻՄ

Քրիստոնեայ՝ կեանքէ-կեանքի ուղեւոր, մահ սահմանագիծ ժամանակաւոր:

Սկիզբ եւ աւարտ, լոյս ու մութ, գարուն եւ ձմեռ, ընթացք ու դադար, բարի եւ չար, դրախտ ու դժոխք:

Մայրս *Շնորհակալութեան Աստուածամայր* ծերանոցէն կը ձայնէ.  
*«Յայտնի եղաւ. **հոսկէ գերեզման...**»:*

Հայրս կը հակադարձէ. *«Կանուխ է դեռ. մեռնելուն մասին մի՛ մտածեր. **ապրիլդ վայելէ...**»:*

Շրթունքները ա՛յս կ'ըսեն. աչքերը մահուան սպասումը կը մատնեն՝ հասուն ծերութեան աւազանին մէջ:

Ահալից է:

Վերջին լուծո՞ւմ...:

Կարօտ: Մարդոց անմարդկայնութիւնը կը ժխտես:

Լաւալ, 10 հոկտեմբեր 2017

## ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

*Հօրենական մեծ մօրս*

*«Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ  
առաջի քո, Տէ՛ր» (Սաղմոս)*

Մեռելատունէն դուրս ելայ: Մխացող խունկին հոտը մնաց քիթիս մէջ:

Մեծ մայրս յիշեցի. Պէյրութ, ամեն կիրակնուտքի խունկ կը ծխէր եկեղեցիէն տունդարձին, «*գուարթ լոյս*»-ը մեզի բաշխելով:

Խունկով եւ աղօթքով մեծցայ, խունկին եւ աղօթքին բաշխիչը դարձայ՝ ոսկիի տիղմէն դուրս:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը մեր կեանքը հատեց:

Հօրեղբայրս Նապաայի կռիւներուն ՀՅԴ գումարտակի վերջին նահատակը եղաւ՝ 4 օգոստոս 1976-ին. հայ *ղանձաս* մը զգետնեց զինք՝ սիրտէն զարնելով: Ան ինկաւ հայութեան եւ Լիբանանի համար:<sup>1</sup>

Այլեւս մեզի համար ամեն բան Վարդան *ամմօ*-իս մահէն առաջ եւ մահէն ետք կը թաւալէր:

Ամեն կիրակնուտքի, տէր հայրը սկսաւ մեր տունը գալ: Խունկ-աղօթքը հոտ ու ձայն փոխեց:

**Ո՞վ կըրցած է վշտալից մայր մը մխիթարել...**

Մեծ մայրս՝ իր խունկը, իր աղօթքը, իր արցունքը յիշեցի:

Լաւալ, 12 հոկտեմբեր 2017

---

<sup>1</sup> Տե՛ս *Հայութեան եւ Լիբանանի համար* (Հայահոծ թաղերու ինքնապաշտպանութեան 25ամեակ), հրատարակութիւն «Ազդակ» օրաթերթի, Պէյրութ-Լիբանան, 2000, էջ 252):

## ԴԱՌՆ ՅՈՒՇ

Երկու օր առաջ, մօրս բուրդի հիւսքի *միջ*-երը աղբաման նետեցի:  
*Շնորհակալութեան Աստուածամայր* ծերանոց գնաց հօրս հետ:  
Այլեւս բանի մը պէտք չ'ունէր: **Ինչէ՛ր անհետ փճացան...**

Այսօր սեւ *քազակ* մը հագած էի: «*Ասի քեզի համար Պէյրութ ես  
հիւսած եմ*», ըսաւ: Ինք հիւսած էր. բայց Նիւ Ճըրզի եւ ոչ Պէյրութ: Ի՞նչ  
տարբերութիւն կ'ընէ...

Տարեդարձին առթիւ գնած հագուստս հագած էր: «*Ասի ես կարած  
եմ Պէյրութ*», յարեց: Ի՛նք կարած էր. բայց Վանգուվըր եւ ոչ Պէյրութ: Ի՛նչ  
յիշողութիւն...

Երանի՛ մօրս որ դեռ Պէյրութով կ'ապրի:

Մօրս կարի տուփն ալ աղբաման նետեցի....:

Լաւալ, 13 հոկտեմբեր 2017

## ՔԱՂՅՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Արդէն մէկ ամիսէն աւելի է ամեն օր հօրս եւ մօրս հետ կ'ըլլամ, իրենց նոր «տունին»՝ *Շնորհակալութեան Աստուածամայր* ծերանոցին մէջ, *Քաղցր փոքրիկ դէմքեր* մանկապարտէզին կ'պաժ շէնքը:

*Շնորհակալութեան Աստուածամայր*-ին շուքը կ'իյնայ *Քաղցր փոքրիկ դէմքեր*-ուն վրայ, աստուածային հոգածութեամբ պարուրելով ծերերն ու մանուկները, կեանքի ճանապարհորդութեան սկսողներն ու տաքը եւ պաղը ճաշակածները:

Ծերանոցէն դուրս կու գամ, կ'անցնիմ մանկապարտէզին առջեւէն, կ'երթամ պուրակին նստարանին վրայ կը նստիմ՝ ամենօրեայ ընթերցումս կատարելու, պատահ մը հաճոյք ծամելու:

Ներաշխարհիս մէջ կը պլլուին ծերերուն ցաւերն ու դժգոհութիւնները, մանուկներուն ծիծաղն ու պոռչտութիւնը, մօրս եւ հօրս ամբողջ օրեր արթոռին փակած մնալն ու տնքալը, անձանօթ երեխաներուն ուստոստումն ու թռչկոտիլը, հինին ամլացումը, նորին սլացումը:

Յամբաքայլ կը վերադառնամ ինքնաշարժիս՝ այս աններդաշնակ աշխարհէն կեանքիս հեւքին վազելու համար:

Մտածում մը կը յաճախէ զիս. Ի՛նչ հեզնանք: Դառն ծերութեան եւ քաղցր մանկութեան եղբայրութի՛ւն՝ Աստուածամօր սիրազեղ նայուածքին տակ:

Կը վերլիշեմ միջեկեղեցական ժողովի մը շրջածիրին մէջ ինկող աւելի բոնագրօս մերձակայութիւն մը՝ Ամսթերտամի Հին եկեղեցին (Oude Kerk) — կրօնի եւ անբարոյութեան ու քրիստոնէական անբծութեան եւ պոռնկութեան դրացնութիւն, աստուածատուն եւ հանրատուն, մանկապարտէզ եւ բնակարանային համադրութիւն:

Կը վերլիշեմ միջեկեղեցական այլ հանդիպում մը Անթիլիաս՝ սեռային արեւելում, աւանդական ընտանիք, նորատիպ գուգաւորում, միասեռականութիւն, բազմասեռականութիւն, Շուէտի լուտերական եպիսկոպոսի եզրափակում. «*Ասոնք բոլորը մեր մշակոյթի՛ն մաս կը կազմեն. հաւատքին հետ կապ չունին*»: Անհեթեթութիւններու շարան...

Ծերանոց կը վերադառնամ, եւ պատին վրայ կը կարդամ ծերերուն շնորհուած իրաւասութիւններուն հաղորդագրութիւնը. «*Արժանապատուութեամբ դարմանուիլ, առողջական վիճակին մասին տեղեակ պահուիլ, որակաւոր խնամքի արժանանալ, կենսական բուժումը ստանալ, առնուելիք որոշումներուն մասնակից դառնալ, կեանքի վերջալոյսին անհրաժեշտ հոգածութիւնը վայելել*»:

Եւ այս բոլորը հիմնաւորող սկզբունքը. «Մարդ արարածը յարա-  
փոփոխ է՝ մինչեւ կեանքին աւարտը. ի՛նչ ալ ըլլայ անոր առողջապա-  
հական վիճակը՝ իւրաքանչիւր մարդ անհատ եզակի է. ան առանձինն  
կամ իր մերձաւորներուն օգնութեամբ կրնայ ինքզինք կառավարել  
մինչեւ իր մահուան պահը. մենք պատրաստ ենք մեր օժանդակութիւնը  
բերելու՝ յարգելով ենթակային կամքը. ան իրաւունք ունի որակաւոր  
խնամք ստանալու, յարգանք վայելելու եւ ամբողջապէս տեղեակ մնալու  
իր վիճակէն»:

Ծերութեան բարկ հոտը կ'անհանգստացնէ զիս:

Ո՛վ անուշիկ Աստուածամայրս, ա՛յս է կեանքը որ ծերանոցին մէջ  
հալող ծերերը ապրեցան եւ մանկապարտէզին մէջ եռացող մանուկները  
պիտի ապրին:

**Բի՛ւր շնորհակալութիւն...**

Լաւալ, 16 հոկտեմբեր 2017

## ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ

*«Երէկ գիշեր գացի. քեզի տեղ չի՛ կայ ըսին, ետ եկայ».* Հայրս է խօսողը, ի պատասխան ամենօրեայ հասարակ տեղիք *«ինչպէ՞ս էս»*-իս, երբ մօրս հետ *Շնորհակալութեան Աստուածամայր* ծերանոցի իր սենեակը կը մտնենք:

Անտրամադիր է: Կը մտահոգուիմ. *«Հա՛յրս ալ արդեօք մօրս նման ալգայմըր սկսաւ ունենալ...»*:

Անմիջական հակազդեցութիւնս կ'ըլլայ. *«Ո՛ր գացիր եւ ետ եկար»*:

Չոր պատասխանը կը ցնցէ զիս. *«Անդի աշխարհ»*:

Մարմինը շատ տկար է, միտքը միշտ արթուն է բարեբախտաբար:

Գիշերը անտանելի ցաւեր ունեցած է. շունչի նեղութիւն, քրտինք, ջերմութիւն, դող: Բուժքոյրը եկած է յաւելեալ վերմակ մը ծածկած է վրան: Այսքա՛ն միայն:

Վիճակը բարելաւուելու յաւելեալ ո՛չ մէկ նշոյլ ունի: Յուսախաբ է: Յուսահատ է:

Ի՞նչ օգուտ, երբ տարիքի բեռան տակ կքած մարմինդ կամաց-կամաց կը քայքայուի:

Բժիշկ-բուժակ, դեղ-դարման, մարզանք-սնունդ ո՛րքան կրնան առողջութիւնդ վերականգնել, կեանքդ քաղցրացնել, ցաւդ ամոքել, քեզ կրկին ոտքի հանել: Ունայնութիւն ունայնութեանց. ամուլ ճիգեր, մարդկային սահմանափակում, բնական թաւալ:

Որքան ալ խնամքով շրջապատուած ըլլաս, ծերութեան առանձնութիւնը անխուսափելի է:

Հայրս եւս կը հաստատէ այս բոլորը. *«Նըրս-ին օգնութեամբ քառորդ ժամ տեւեց այս առտու անկողինէս սա աթոռին վրայ նստիլս: Նայէ՛ մատներս ալ չեն բռներ կոր»*: Ջուրի գաւաթը կը դողայ ձեռքերուն մէջ...

Անդին, մայրս իր ներաշխարհին մէջ է. նոյնիսկ չէ հասկցած ինչու ապրած մահուան սարսափը. *«Մա վարագոյրը բաց, արեւ թող մտնէ. արեւը միքրոպ-ը կը կտրէ: Ինծի գաւաթ մը ջուր տուր: Հոս թայլանով կու տա՞ն ինծի: Ե՛րբ սենեակս պիտի տանիս»*:

Քուչակ կ'արձագանգէ. *«Ա՛յ հոգի, երբ տունն ի քակել առնու, տէրըն ներսն այլ ի՞նչ բան ունի»*:

Լաւալ, 19 հոկտեմբեր 2017

## ԼՈՅՍ

*Շնորհակալության Աստուածամայր ծերանոցի հօրս սենեակի քովի անկողինին մեջ ապրող մարդը այսօր իր վերջին շունչը փչեց:*

Խաղաղ մահ, առանձին շիջում:

Մարդը տարին, տեղը ուրիշ մարդ մը բերին: Ըսած էին արդեն.  
*«Մպաստողները շատ են. ցանկը երկար է»:*

Հայրս չգիտցաւ, որ քովի մարդը գնաց եւ տեղը նոր մարդ եկաւ: Անոր աչքերը հազիւ մատները կը տեսնեն:

Մայրս ալ քիչ մը անդին, այցելուի աթոռին վրայ նստած, ճոնիկին յենած, *ալգայմըր-ի* կշռոյթով կը յանկերգէր. *«Վարագոյրը բաց, լո՛յս թող գայ. տե՛ս, քովի մարդուն վրայ ի՛նչ աղուոր արեւ է»:*

**Լո՛յս, կը պարուրես ամեն օրօրոց եւ շիրիւ:**

Կեանքի ուխտաւոր այս մարդը բարի շող մը մուրաց քեզմէ՝ մինչեւ վերջին իջեւանը իր ճամբուն, մինչեւ խուճապը իր ներկային, մինչեւ երազը իր ապագային. ահա հիմա մնաց միայն յուշը անցեալին:

Լո՛յս, մարդը փիլիսոփայութեան ուսուցիչ եղած էր. իր վերջին դասը տուաւ՝ *«Մնաս բարով կեանք, բարի լո՛յս մահ»:*

Մահը այսքա՛ն մօտեցա՞ւ մեզի...

Լաւալ, 26 հոկտեմբեր 2017

## ԳԱՅԻՔ

Գալ, երթալ, գալ, երթալ... *«Կեանքի օրէնքն է»*, կ'ըսեն. Այդպէս թող ըլլայ:

Եկաք, գացիք, եկաք, գացի՞ք — գացիք:

Ապրիմ-մեռնիմ է կեանքը — կ'ապրինք, կը մեռնինք, կ'ապրինք, կ'երթանք, կ'ապրինք — տարագրութիւն:

### Պուրճ Համուտ

*Թենեքելի Փարիզ*-ի տնակ, անձրեւ կու գայ, *սեւ* կու գայ, տէրտէր *պապա*-ն մեր տունն ալ կու գայ:

Պելկուզար *պաճըն* եկաւ, ասեղ զարնող Սիրունը գնաց, *տելի* Թըր-վանտան եկաւ (*«պաթըրճան-ի աստեն խենթութիւնը կու գայ»*):

Ձուկ ծախողը եկաւ (երանի՛ ուտողներուն *«մեր ճաշը այսօր պուլդուր փիլաւ է այրան-ով»*): Դպրոցի վիճակացոյցը եկաւ՝ նորէն առաջին չես ելած, *«եազըիս փարայա»*:

Եկաւ սուրճը խմեց, *«գործ ունիս»*, ըսաւ՝ գնաց:

Եկեղեցի, կիրակնօրեայ, ֆութպոլի խաղ, *չի-քէօֆթէ, սինեմա*, Վարդանանց, Ապրիլ 24, Մայիս 28, Նոյեմբեր 29, *«Հայաստանէն եկած զինուոր»*:

### Մագրաաթ Քրֆրտէպլէն

Իլիասին *փոսթա*-ն ուշացաւ, եկաւ վերջապէս:

Մնտուկներով պտուղ, քաղաք գնաց, գրպանը դրամ՝ ետ եկաւ, *«ի՛նչ շահեցանք»*:

Մաքուր օդ, *«այս դդումները մատամ Ալիսը այսօր բերաւ, նոր փրցուցեր է իրենց պարտէզէն»*, թարմ կաթ, անուշ քուն, հացին բոյրը բռնած է թաղը, *«ըթֆատլու»*, գնաց, հացով եկաւ:

*«Պապա-ն Պէրրութի տաքերուն մէջ կ'եփի կոր»*, եկաւ, շաբաթ է այսօր, կիրակին ալ հոս է, գնաց երկուշաբթի:

Մայրապետներու դպրոց, մէջերնին մէկ հատ երիտասարդուհի ալ չկայ, *«եա Ռապ, եա Եասուհ»*:

### Պուրճ Համուտ

Ծայրը հասանք. Պատերազմ, *քահրապա*-ն գնաց, *սարուի*-ը եկաւ. Սուրիացին եկաւ, *քաթայէպ*-ը եկաւ, ջուրը գնաց, կտրեցին, *պենզին* ալ չկայ:

Ուիսքին եկաւ, սարիսօշ Անդրանիկին այսօր շատ օղի խմցուցին, «այնայա պահտըմ», «եալլա ասֆուրիյէ»:

Օթո-յին ետեւը կապած սոմալցի մը քաշեցին թաղէն, «այս է մարմին իմ», «այս է արիւն իմ», անցան, գացին:

Եկէք չէլլիկ խաղանք:

**«Կեանքն ալ եկող-գացող, անցնող խաղ է»:**

#### Քանատա-Ամերիկա-Քանատա

Ազատեցանք ճենեպէթ Լիբանանէն. Զի՛ շտկուիր, ետ գացող չեմ ես: Աշխարհի մէջտեղն ենք հիմա. «Վանգուվըր երկիր դրախտավայր»

(Beautiful British Columbia) — Արարատ, Սեւան, Ատանա, Իսկենտերուն, «ի՛նչ աղուոր ի՛նչ սիրուն ամմա», երանի աւելի կանուխ գայինք:

Ի՞նչ կ'արժէ սա վիլլա-ն, ամսուն վերջը մէկ սենեակնոց փարթըման-ին վարձքը ինչպէ՛ս պիտի տանք, գործի գնա՛:

Հայապահպանում, ո՞վ եմ ես, Ղարաբաղ, Երկրաշարժ, Սումգայիթ-թուրք-ջարդ, «կեցցէ՛ ազատ, անկախ, (միացեա՛լ) Հայաստանը», «քարոք է մեզ աստ լինել», կորուպցիա, «Մոսկուայում աւելի շատ փող ենք աշխատում», «հայկական սուրճ մը ըլլար տէ խմէինք»:

«Աս որքա՛ն հայութիւն կայ Նիւ Ճրքիին մէջը», հայ լուսաւորչական, հայ կաթոլիկ, հայ բողոքական, պոլսահայ, ամերիկահայ, հայաստանցի, — «ամենէն լաւը մերիններն են», ուրկէ՞ եկան ասոնք բոլորը, ձեռնարկներ, պատարագներ, բիքնիկ-ներ, ցոյցեր, եկանք, գացինք:

«Ղարաբաղը Հայաստան է», Նիւ Եորք, Հայաստանի հանրապետութիւն նոր անդամ ՄԱԿ-ի, «կեանքիս ամենաերջանիկ օրն է, հիմա կրնամ մեռնիլ»:

Ետ Քանատա – Մոնթրէալ (Je me souviens) գացինք, «աս ի՛նչ պաղ է, պիտի ստոնք հոս», պատի կոճակին կը դպնայ, կէս ժամէն կրակ է տունը. քեմի-ի վարախա-յին փայտերուն արանքէն եկող հովը կը փնտռէ, «կեչմիշ օլա», եանք է՝ կ'անցնի, կու գայ, կ'երթայ:

Ծերանոց ինկանք, առաջին տարին՝ սենեակս է նոր տունս, վեց ամիս յետոյ՝ բազկաթոռս է նոր տունս վերջին մի քանի ամիսը՝ անկողինս է նոր տունս. Վերջին կայան – «այսօր տէր հայրը եկաւ». «ո՞ր տէր հայրը». «շէնքին կաթոլիկ վարդապետը. Ինչալլա մերինները կարծեցիր, հը՛». «երէկ իրիկուն շատ գէշ էի. գացի-ա-գացի (աքացի!!!), ետ եկայ». Կինը անիւ-աթոռին վրայ կ'երթայ-կու գայ, լուր չունի, խոր-խոր կը քնանայ. «ի՛նչ լաւ կը նային կոր մեզի հոս. Պէյրուք ըլլայինք նէ

հալեքնիս բերուշան էր»։ *մորֆին*-ը ողջ մնա՛. Ճաշը եկաւ, *տոքթոք*-ը  
զնաց. Դուք ալ գացիք։

Եւ ես յանկարծ տարիքով մեծցայ։

Գացի ք։

Տէ՛ր, մեր աչքերուն դիմաց միշտ պարզէ քու անխուսափելի գա-  
լուստիդ պատկերը։

Պիտի գաք...

Մոնթրէալ, 5 յունիս 2020

## ԱՆԴԵՆԱԿԱՆ

Այսօր այցելեցի այն ծերանոցը, ուր ծնողքս իր կեանքին վերջին օրերը անցուց:

Հոն էին բուժականները, բժիշկները, մաքրութեան հոգաձու սպասաւորները: Ղպտի մաքրողը կը շարունակէր աւելել եւ սրբել գետինը:

Կեանքը իր բնական հունով կերթար...:

Մտայ ծնողքիս սենեակը: Պաղ քրտինք մը պատեց ճակատս եւ յիշատակի դող մը ցնցեց մարմինս: Ուրիշ կին մը եւ տղամարդ մը պառկած էին հօրս եւ մօրս անկողիններուն մէջ: Անբնական տնքոց կը լսուէր: Ցաւով լի աչքեր կարեկցանք կը փնտռէին:

Մահուան սպասումը կը խեղդէր կոկորդս...:

Հիւրընկալ յարկ մըն էր այս կառոյցը մի քանի տարի առաջ, երբ մայրս, հայրս եւ ես քալելով սեմէն ներս մտանք եւ զիրենք իրենց նոր տունին մէջ տեղաւորեցի: Ապա՞ ... դազադով դուրս ելան անվերադարձ:

Յիշատակներ կը խաչաձեւէին իրար. կարօտով կը տոչորէի:

Դառն է անվերադարձ հրաժեշտը — *«Երթաք բարով»*-ը *«Ցտեւտութիւն»* չէ:

= *«Բախտաւոր ենք որ լաւ տեղ ինկանք»*, խօսուն մայրս էր:

== *«Կարգը մերն է եղեր հիմա»*, հօրս մարգարեական ձայնն էր:

=== *«Ծերանոց-հիւանդանոց է հոս»*, ես էի՝ բան մը ըսած ըլլալու սիրոյն:

.....

==== *«Ուրախ եմ քեզ նորէն տեսնելուս համար»*, ծնողքիս դիմացի սենեակը ապրող հայ մարդն էր, որ հիմա կը սկսէր հետս գրուցել:

*«Ո՞ղջ է դեռ»*, ինքզինքիս հարց տուի: Ի՞նչ անհեթեթութիւն:

*«Օր մը ե՞ս ալ հոս պիտի գամ: Մեւ օր մը հոսկէ՞ պիտի երթամ: Ես այլեւս ոչինչ պիտի տեսնեմ, ոչինչ լսեմ, ոչինչ զգամ, բայց աշխարհը պիտի շարունակէ դառնալ ուրիշներուն համար»* — Կը խոկամ եւ դուրս կը սուրամ:

Ասո՞ր համար եկայ:

**Արդեօք տեղ մը նորէն պիտի հանդիպի՞նք:** Մինչ այդ, ի՞նչ...:

Հարցումներու խուրձը շալկած՝ կեանքին մէջ կը նետուիմ:

Պապ եւ մամ, ձեր բացակայութեամբ աւելի ներկայ էք հիմա...:

Մոնթրէալ, 13 սեպտեմբեր 2023

## ՇՆՈՐՀԱԲԱՇԽԸ

*Մեծ հորս*

*«Զի ի տուրնջեան եւ գիշերի  
տացցուք քեզ փառս անլռելի»  
(Ժամագիրք)*

Եկեղեցւոյ զանգ-հրաւերը աղօթքի կը կանչէ. զանգիւններու ար-  
ձագանգով իր տեղը կը գրաւէ նստարանին վրայ:

Տարիներ ու տարիներ այսպէս. կեանքն ամբողջ...:

Տիրոջ առաքուած օրհնութենէն — «Առաւօտ լուսոյ» մինչեւ  
արձակում-մեկնում — «Օրհնեալք եղերուք», ամեն օր՝ անձաձրոյթ:

Բառեր, ձայներ. նստիլ-ելլել, երկրպագել. խունկ, բուրվառ, մոմ.  
աստուածապահ շուրջառով ծածկ՝ երկնաձիգ ճամբուն վրայ:

Աչքերը վեր, արեւի ճառագայթներու պարին մէջ, Շնորհաբաշխին  
թեւածումը կը տեսնէ: Երկինքէն շնորհք կը տեղայ...:

Ժամերգութիւնը աւարտած է:

Ո՞վ կրցաւ կաթիլ մը շնորհ լեցնել իր հողեղէն պատուական  
անօթին մէջ:

Միայն Պարգեւատուն գիտէ...:

Հոռմ, 18 յունուար 2024

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆՔ

## THE END

It is time for me to go, mother; I am going.

When in the paling darkness of the lonely dawn  
you stretch out your arms for your baby in the bed,  
I shall say, "Baby is not there!" — mother, I am going.

I shall become a delicate draught of air and caress you;  
and I shall be ripples in the water when you bathe,  
and kiss you and kiss you again.

In the gusty night when the rain patters on the leaves  
you will hear my whisper in your bed,  
and my laughter will flash  
with the lightning through the open window  
into your room.

If you lie awake, thinking of your baby  
till late into the night,  
I shall sing to you from the stars,  
"Sleep mother, sleep."

On the straying moonbeams I shall steal over your bed,  
and lie upon your bosom while you sleep.

I shall become a dream, and through the little opening of your eyelids  
I shall slip into the depths of your sleep;  
and when you wake up and look round startled,  
like a twinkling firefly I shall flit out into the darkness.

When, on the great festival of *puja*,  
the neighbours' children come  
and play about the house,  
I shall melt into the music of the flute  
and throb in your heart all day.

Dear auntie will come with *puja*-presents  
and will ask,  
“Where is our baby, sister?”  
Mother, you will tell her softly,  
“He is in the pupils of my eyes,  
he is in my body and in my soul.”

By Rabindranath Tagore (1861–1941), “The end”, appears in *The Crescent Moon*, no. 32, first published in 1913. Based on a text in Bangla (Bengali).

### ԱԻԱՐՏԵՑԱԻ...

Հասած է մեկնումիս պահը, մայրի՛կ. ես արդէն կ'երթամ:

Երբ յամեցող խաւարը փարատող արեւածագին մենութեան մէջ  
ձեռքերդ կը տարածես սնարին մէջ եղող մանկիկդ գրկելու,  
պարտաւոր եմ քեզի ըսելու. «Մանկիկդ հոս չէ».  
քաղցր մայրի՛կ, ես արդէն կ'երթամ:

Զեփիւտ պիտի դառնամ ու քեզ գգուեմ.  
Եւ լոգանքիդ հոսող ջուրին հետ քեզ միշտ ու միշտ պիտի համբուրեմ:

Փոթորկոտ գիշերը, երբ անձրեւը տերեւները կը թմբկահարէ  
անկողինիդ մէջ շշունջս պիտի լսես  
Եւ խնդուքս բաց պատուհանէն կայծակի նման  
ննջարանդ պիտի այցելէ:

Գիշերը, երբ մինչեւ ուշ ժամեր արթուն մնաս  
Եւ մանկիկիդ մասին մտածես,  
աստղերէն քեզի պիտի երգես. «Քնացիր, մայրի՛կս, քնացիր»:  
Լուսնեակի յամեցող նշոյլներուն հետ  
անկողնիդ վրայ պիտի երկնամ  
Եւ քեզ գրկես, երբ արդէն անուշ քունդ կըմբռնես:

Երազ պիտի դառնամ եւ թարթիչներուդ նեղ պատուհանէն  
 խոր քունդ թափանցեմ,  
 եւ երբ արթննաս եւ շուարուն չորս կողմդ նայիս  
 թեւածող թիթեռի նման խաւարին պիտի երթամ:

Մեծ տոնին օրը, երբ դրացիներուն փոքրիկները գան  
 եւ մեր տան շուրջ սկսին խաղալ,  
 սրինգի նուագին պիտի ընդելուզուիմ  
 եւ ամբողջ օրը սրտիդ մէջ բաբախեմ:

Միրելի մօրաքույրս մեծ տօնի նուերներով ծանրաբեռն  
պիտի գայ եւ հարց տայ քեզի.

«Ո՛ւր է մեր փոքրիկը, քոյրիկս»,  
մայրի՛կ, իւրայատուկ քաղցրութեամբդ պիտի ըսես.  
«Աչքիս բիբին մէջն է. մարմինիս մէջն է. հոգիիս մէջն է...»:

Անթիլիաս, 17 դեկտեմբեր 2019

(Հեղինակ՝ Ռապիխտրանաթ Թակոբ (1861–1941), առաջին անգամ լոյս տեսած է 1913-ին):

## MOMMY

The milk glass fell out of her hand and broke.  
Her son screamed at her and left the room angry.  
I wrote him a little message.  
And when her son came back, he found her sleeping  
on her chair as usual and the message in her hand.  
He took it and read it:  
“My son and my baby and my eye read: I’m sorry... I’m getting old.  
My hands tremble and my food falls on my chest.  
And I’m no longer elegant, beautiful, good-smelling!!  
Don’t hurt me.  
And I can’t wear my clothes and shoes!! Help me.  
And don’t take my feet to the bathroom!! And hold my hand.  
And remember how much you took with your hand so that you can walk.  
To keep me from the weakness of my memory and slow my words  
it’s of conversation now just to be with you.  
Your laugh was funny when you were little;  
Don’t deprive me of your smile now.  
I’m simply waiting to die.  
I was with you when you were born.  
Be with me... When I die  
In the end I am your mother, YOUR MOTHER. Mommy!!!”

May God not deprive our mothers from heaven... ♥

## ՄԱՄԱ

Կաթի գաւաթը ձեռքէն ինկաւ եւ փշրուեցաւ:  
Տղան վրան պռռաց, եւ բարկութեամբ լքեց սենեակը:  
Կարճ նկատողութիւն մը գրեցի տղուն:  
Երբ տղան վերադարձաւ, տեսաւ որ ինչպէս միշտ  
մայրը իր աթոռին վրայ քնացած էր՝  
նկատողութիւնը չոր ձեռքին մէջ:  
Ան առաւ նկատողութիւնը եւ կարդաց.

«Տղա՛ս, գաւա՛կս, աշու՛կս. Կը ներես... ծերացած եմ:

Ձեռքերս կը դողան եւ ոտքերս կը կթոտին:

Այլեւս վայելուչ, գեղեցիկ եւ անուշաբոյր չեմ:

Զիս մի՛ վիրաւորեր:

Այլեւս առանձինս չեմ կրնար հագուստներս եւ կօշիկներս

հագնիլ:

Օգնէ ինծի:

Զիս լուացարան մի՛ քաշկոտեր: Ձեռքս բռնէ եւ յիշէ,

թէ ինչպէ՛ս ձեռքս կը բռնէիր որպէսզի կարենայիր քալել:

Յիշողութիւնս կը դաւաճանէ ինծի

եւ բառերս կը խուսափին ինձմէ.

Միակ խօսակցութիւնը որուն կը փափաքիմ քեզի հետ ըլլալս է:

Ի՛նչ ուրախ քրքիջ ունէիր փոքր եղած ժամանակդ:

Զիս ժպիտեղ մի՛ զրկեր:

Գիտե՛ս, պարզապէս մահս կը սպասեմ:

Ես քեզի հետ էի երբ դուն ծնար:

Դուն հե՛տս եղիր... երբ մեռնիմ:

Ի վերջոյ ես մայրդ եմ՝ ՄԱՅՐԴ, ՄԱՄԱ՝~~~~~

Աստուած մեր մայրերը երկինքէն չզրկէ...♥

Անթիլիաս, 19 դեկտեմբեր 2019

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Սփիւք.....Հայաստան, Հայաստան.....Սփիւք.

Սփիւք-Հայաստան, Հայաստան-Սփիւք.

Սփիւք-Սփիւք-Սփիւքներ.

Այսպէ՛ս՝ իրարմէ կախեալ, կրկնակ գիծով միացած, երբեակ գիծով իրար գրկած հայկական նոր իրականութեան դէմ յանդիման ենք կանգնած:

Ինքնութեան, բազմինքնութեան, անինքնութեան, այլինքնութեան, այլութեան, բազմայլութեան եւ հայինքնութեան ոլորապտոյտին մէջ ենք ամեն տեղ:

Հայու 21-րդ դարու խճանկարը մշակոյթով, ընտանիքով, դպրոցով, ակումբով, եկեղեցիով, հայ դատով եւ այլ ինքնասահմանուած արժէքներով հայրենիքի ու «հայրենիքներու» մէջ դրած է մեզ:

Այսպէ՛ս կապրինք այստեղ, այնպէ՛ս կապրինք այնտեղ, այսպէ՛ս-այնպէ՛ս կապրինք ամեն տեղ:

Այսպէ՛ս է մեր այսօրը, այնպէ՛ս պիտի ըլլայ մեր վաղը, եւ այսպէ՛ս պիտի շարունակենք յաւիտեան...:

Այս գոյութենական հարցումին պատասխանը իւրաքանչիւր հայ ի՛նք պիտի տայ՝ իր հայ/օտար շրջանակին մէջ:

Անթիլիաս, 10 մայիս 2014

## ԽԱՐԻՍԽ

**Պուրճ Համուտը մանկութեանս եւ պատանեկութեանս օրրան է:** Ս. Վարդանանց եկեղեցիի արարողութիւնները, մեծ ծնողներու եւ ազգականներու գգուանքը, Ս. Ծնունդի աւետումի այցելութիւնները՝ «Այսօր տօն է ... աւետիս, կաղնտոս» երգով, պղինձէ ամաններու չիչիկոցով կանուխ զարթնումը՝ Ս. Սարգիսի տօնի *հալվայի* ճաշակումին համար, ձմեռնային անձրեւի հեղեղը եւ երկնացօղ կաթիլներու անուշ նուազը տունին թիթեղեայ ծածքին վրայ, խորոված *քեսթէնէի*, սխտորով *փաշայի* եւ Ս. Զատիկի *քէիկէի* համը, ամառը կապոցներու հեւքոտ փաթաթումը, Պէյրութի կաշուն տաքէն դէպի գով գիւղ փախուստը՝ թոնիրի հացի եւ թարմ կաթի վայելումով անջնջելի հետք են թողած:

**Անթիլիասի մայրավանքը պատանեկութեանս հոգեւոր աճումին խանձարուրն է:** Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի ամենօրեայ ժամերգութիւններն ու կիրակնօրեայ սուրբ պատարագներու մասնակցութիւնը, շապիկը, ուրարը, քշոցը, սկիհը եւ աղօթքը՝ խոր նշանակութեան հաղորդութիւն, «*Հրեշտակ զուարթուն, հզօր պահապան մեր*» աղօթական երգով քնանալը, նարինջենիներու ծաղիկներուն բուրմունքը, մասունքը, ժառանգը եւ ընծան՝ մինչեւ «*Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի...*» ձեռնադրութեան նուիրագործում ուղենշային հարազատութիւն ընդգծած են:

**Վանգուվրի ծուխը երիտասարդական աւիւնով յորդուն առաքելութեանս անդաստանն է:** Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիի հովուութիւնը, առանձնութիւնն ու համալսարանական ուսումնառութիւնը, վանքին կարօտը, ակադեմական շփումը, բանաւոր հօտին ծաւալումը եւ զանազան ձեռնարկներով կիտաւոր հնգամեայ ծառայութիւնը անուշ յուշերով պարուրած են ներաշխարհս:

**Նիւ Ճրբգիի հովուական պատասխանատւութիւնս յանձնառութեան եւ հասունութեան եզակի առիթն է:** Ս. Վարդանանց եկեղեցիի ճամբով ամերիկահայերուն, պոլսահայերուն, ռումանահայերուն, սուրիահայերուն, լիբանանահայերուն, հայաստանահայերուն հոգեւոր եւ ազգային կարիքներուն գոհացումը՝ հայապահպանութեան նուիրական

դրօշին տակ, իրագործումներու գոհունակութեամբ յորդեցուցած են հոգիս:

Եթովպիա, Հնդկաստան, Ժրնեւ, Մոնթրէալ, Լոս Անճելըս, Հալէպ, Գահիրէ, Զիմպապուէ, Սալզպուրկ, Փարիզ եւ դեռ խառնաշփոթ ու խառնիճադանճ խառնուղիներ, տեղեր ու տեղեր միջեկեղեցական ժողովներու քննարկումն ու փորձառութեան խորացումը եւ հայերու հետ ջերմ հանդիպումները երկար տարիներու հոգեւորականի կոչու-միս բազկերակն են: Յիշատակներ իրար կը խաչաձեւեն՝ Ս. Գէորգ եկեղեցի, Ս. Թովմաս եկեղեցի, Ս. Գրիգոր հայոց եկեղեցի, Ս. Յակոբ եկեղեցի, Ժան Կուժնի եկեղեցի եւ բռնագրաւուած դպրոցով, հապէշ աշակերտութեամբ, հինտու, իսլամ եւ քրիստոնէայ համակեցութեամբ, տաճարի, մզկիթի եւ եկեղեցիի դրացնութեամբ գոյութենական համադրութիւն եւ ներքին պայքար կը դրսեւորեն, *Արմինէրն Սթրիթով* բեկորեալ մնացորդացը կը ցուցադրեն, համաշխարհայնացումով եւ երկխօսութեամբ վկայութեան վրանը կը բանան, միութիւն զանազանութեան մէջ - զանազանութիւն միութեան մէջ՝ քրիստոնէական հաւատքի եւ համաքրիստոնէութեան կարգ-կանոնի ուղեգիծը կը ճշդեն, *Թուր Էյֆէլի* շուքին տակ Կոմիտասի եւ «Յառաջ»-ի յուշերուն էջերը կը դարձնեն – «*Նահանջը ատանց երգի*»-ն աւաղելով...: Նոյն ծիրին մէջ Հայաստան-Արցախ, հայրենիք եւ գոյամարտ, Ս. Հռիփսիմէ, Մաշտոցի անուան մատենադարան, Թումանեան-Սարեան խաչմերուկ, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիճան, Արարատ, Սեւան, շրջափակում, արտագաղթ, փտածութիւն, հոգեմաշութիւն, հայրենադարձութիւն, Գանձասար, Շուշի՝ նոր Աւարայր ու Սարդարապատ կը կոթողեն: Վերջապէս՝ Կիլիկիա-Ծովային Հայաստան եւ պատմական Հայաստան պահանջատիրութիւն, Ս. Սոփիա, Իսկէնտէրուն, Տէօրթ-Եոլ, Ատանա, Տիգրանակերտ, Սասուն, Մուշ, Վան, Աղթամարի Ս. Խաչ, եկեղեցիներու պարս, յուշերու պար, սուտ-իրաւ, խաբկանք-յաղթանակ, օրհնութիւն-անէծք, մշտուոր շրջագայում, անհանգրուան հանգրուանում, սեւ ուրուական, անդառնալի կամք, հաստատ վերադարձ, վերջնական խաբսխում իրար կը հրմշտկեն եւ պայծառ տեսիլքս կը պղտորեն:

Ե՞րբ, ինչպէ՞ս, ինչո՞ւ: Մինչ այդ՝ կեանքը վայելել, աղօթել, ճառել, վիճիլ — հայ ծնիլ, հայ մնա՞լ, հայ մեռնիլ...

Մոնթրէալ, 7 հոկտեմբեր 2017

## ՀՈԳԵՇԷՆՔ

Անթիլիասի մայրավանքի բակին մէջ կայնած չորս կողմս կը դիտեմ: Ապրիլեան նահատակներու յուշարձան-մատուռ, վեհարան եւ թանգարան արդար պահանջատիրութիւն, համահայկական առաջնորդութիւն եւ մշակութային առաքելութիւն կը յուշեն:

Ամառ է: Պիքֆայայի Ս. Աստուածածին վանք կը բարձրանամ: Նոնենին, խնձորենին եւ թզենին մեր փոքր ածուին այգեկութը կ'ուր-լագծեն:

Քարը, երկաթը եւ կղմինտը շէնքերը ոգեղէն տուններու կը վերածեն՝ դպրեւանքի հայ մարդը կազմաւորող ամենօրեայ գլանին տակ:

Մատուռ կը մտնեմ: Հայ քրիստոնէական հաւատքի վառարանին ջերմութեամբ եւ ազգային իղձերու շտեմարանին անսպառ հարստութեամբ կը պարուրուի հոգիս:

Հոգեպտուղ քաղած, միաբան ու համագործ՝ յիսուսակեդրոն կոչումով լեցուած անսակարկ ծառայութեան դաշտ կը նետուիմ:

**Հոգեշէնքը երբեք փուլ չի՝ գար...**

Մոնթրէալ, 8 հոկտեմբեր 2017

## ԵՏԵԻԷԴ ԶԵ՛Մ ԳԱՐ...

*Մարկաւագներուն*

Ձեռնադրութեան սրբազան պահուն «Հետեւէ՛ ինծի...» տէրունի ձայնը սուրբ տաճարին մէջ կը հնչէր երէկ, կը հնչէ այսօր, պիտի հնչէ միշտ:

Լսո՞ղը ով է:

«**Ետեւէդ չէ՛մ գար**» կ'արձագանգէ խոր ձայնը մեղաւորին, ինքնուրացութենէն փախչողին, խաչը լքողին:

«Ես կը նախընտրեմ հաւատալ, քան թէ հետեւիլ եւ հանգիստս ձգելով Քեզ հետ քայլ պահել», կը տրամաբանէ բանական երիտասարդը՝ ծանր ուխտը ցկեանս կրելէն խուսափելով:

Դուրս կը վազէ, կը հատէ ինքնաշարժներու կանգառը, կրկնելով՝ «Չեմ գար. չեմ գար. չեմ գար: Անորոշին գերին չեմ ըլլար: Քու տանելիք բորոտներուդ քով չեմ երթար»:

Փողոցն է արդէն: Ան բռնած է ձեռքէն, կը նային Իրեն, կը վերյիշէ՝ «Կատարեալ եղէք»: Կը շարունակէ խօսիլ, ձեռքը սեղմած՝ «Երկինքի մէջ գանձ պիտի ունենաս. գնա՛, ծախէ՛, բաշխէ՛»:

Կը քալեն՝ ձեռք-ձեռքի, ան Տէր-ունի է այլեւս:

«**Եկա՛յ, Տէ՛ր...**» կը գոչէ:

Ի՛նչ երանութիւն. Տիրոջ ընծայեալներէն նոյնիսկ մէկ հոգի հօտէն չհեռացաւ:

Պիքֆայա, 12 փետրուար 2019

## ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՉԱՐԸ

*Արեղաներուն*

Հասած է աշխարհէն հրաժարումի վճռական պահը: «Այո»-ին եւ «Ոչ»-ին բախումը անխուսափելի է: Մեծ ուխտը պիտի կնքուի՝ ծնկաչոք, բարի Վարդապետին հետեւելու անվերադարձ քայլով:

Յանկարծ Սադրիչը կեանքի թաքուն անկիւններէն կը խուժէ յարաշարժ, սատանայական հնարքներու ուռկանով բաց եւ անդուլ սուր ժանիքներով՝ գողնալու մեծ ու պզտիկ, ամենուրեք:

Տաճարը լի է կեանքի ուղիներէն հոս հասած բազմութեամբ:

Կը հնչէ ձայնը վերէն՝ «Աստուծոյ սպառազինութիւնը հագէք». փրկութեան աւետիսը կը պարուրէ բոլորը, կը շղթայազերծուի չարին դէմ պայքարը:

Նորընձաները արդէն կապած են ճշմարտութեան գօտին, հագած՝ աւետարանին կօշիկը, բռնած՝ հաւատքի վահանը, դրած՝ փրկութեան սաղաւարտը եւ զինուած արդարութեան գրահով:

Հօր Աստուծոյ խօսքը կը հնչէ, Փրկիչին խաչը կը բարձրանայ եւ Ս. Հոգիին սուրը կը շողայ:

Սատանան կը խորտակուի, **խաղաղութիւնը կը թագաւորէ եւ աղօթքը կ'արձագանգէ...**

Պիքֆայա, 18 փետրուար 2019

## ՔԱՆԱՏԱՅԻՆ

*«Ո՛վ Աստուած, մեր հայրենիքը  
փառահեղ եւ ազատ պահէ:  
... Ո՛վ Քանատա, քու արի  
պահապաններդ ենք»  
(Քանատայի ազգային քայլերգ)*

1989-ին, բախտաւոր օր մը, Քանատայի քաղաքացիութիւն ստացայ: Նախ Պրիթիշ Գոլոմպիան եւ ապա Քըպէքը բաց սիրտով հիւրընկալեցին ծնողքս եւ զիս:

“Beautiful British Columbia” եւ “Je me souviens” բարոյական մակագիրներուն մէջ սեղմուած՝ ովկիանէ ովկիան ձգուած Քանատայի ցամաք գետայատակի խինձին մէջ կը դեգերիմ:

Ուժեղ եւ փառաւոր, յուսաբեր եւ ազատ, պաշտպանեալ եւ յաղթեալ, ցմահ հաւատարմութիւն, տկարներուն օթեւան, ժողովրդավարութիւն, հասարակապետութիւն, անստուեր պայծառութիւն եւ Աստուծոյ արքայութեան փնտոտութիւն՝ Քանատայի խորհրդանիշերէն են:

Վայրի վարդ, արեւաշող ապրող երկինք, ցորենի՝ ոսկի հացի սակառ, քարիւղի սաւան, վերջին սահմանագիծի մեղրածոր երկիր, կենսաբոյր հազար-հազար լիճերու լողաւազան՝ Քանատայի գովաբանութեան մասնիկներէն են:

Բնիկ հնդիկներու խրճիթներու գումար, տոհմանշան, թղկի, կուղբ, բու, մանուշակ, կարմրախայտ եւ նաւ դիւցազնութեանց՝ Քանատայի դարաւոր արմատներուն հիւսկէններէն են:

Գաղթական զաւակներուդ տասը նահանգ եւ երեք երկրամաս... ձիւնածածկ, սակայն հոգեջերմ՝ Քանատան հարազատօրէն կը բնո-րոշէ:

Լաւալ, 1 ապրիլ 2021

## Ո՛Ն, Ի՛ՆՉ ՀՐԱՊՈՅՐ

«Հետեւէ՛ ինծի» (Յիսուս)

Կրակը կը ճարճատի քահանայապետին տունին գաւիթին մէջ: Այս ի՛նչ բոց է. կը լափէ, կը հրդեհէ. ամեն ոք իր անկիւնը կը կծկուի: Պետրոս աւելի կը մօտենայ բորբոքող կրակին. մեծ փաթիլներով ձիւն կը տեղայ անոր հոգիին մէջ. ան կը սառստայ:

Ո՞ւր են իրենները, ո՞ւր է Ռաբբին:

Յանկարծ կը յիշէ Կափառնաւումի սինակոկի փաթեթէն թափուող խօսքերը. «*Հարից զհովիւն եւ ցրուեցին ոչխարք հօտին...*»:

Ո՞ւր է Յիսուս: Ո՞ւր տարին զինք:

Ո՞ւր է Յովհաննէս: Ո՞ւր է Մատթէոս: Ո՞ւր է Յուդա:

Բոլորն ալ կը տողանցեն միտքին մէջ. սիրտին մէջ:

Չկան: Կային: Չկա՞ն:

Սպանեցին հովիւր եւ հօտին ոչխարները ցրուեցան:

Ցրուեցա՞ն...:

«*Աս ալ անոր հետ էր. աս ալ անոր պէս գալիլեացի է*» – աղախինը կողքէն կը յուշէ պահակ զինուորներուն:

«*Ո՛վ կին, չես գիտեր ի՛նչ կը խօսիս. ես անոնցմէ չեմ. չեմ ճանչնար զայն*» – երիցս կուրանայ Պետրոս:

Եզակի լուսաբացին հետ արադաղին կանչը կը լսէ Պետրոս:

Կը յիշէ. Տէրը ըսած էր իրեն՝ «*Հաւը այս առաւօտ քեզի համար պիտի կանչէ...*»:

Ստուեր մը կ'անցնի: Չորս մարդիկ ձերբակալեալ մը կը տանին:

ԱՆ է. ԷՆ է: Կը դառնայ եւ Պետրոսին կը նայի: Ի՛նչ կիզիչ սէր. ի՛նչ շեշտակի նայուածք, ի՛նչ ներող աչք...

Երկուքին նայուածքները իրար կը պարագրկեն:

Յիսուս մէկ նայուածքով ծնունդ կու տայ ապագայ առաքեալին:

Պետրոս դուրս կ'ելլէ հին կեանքէն, դառնագին կու լայ. կը ծնի Յիսուսի ցրուեալ գառնուկներուն արածիչը:

Հովիւր կը ժողովէ նոր հօտը...

Անթիլիաս, 30 յունուար 2022

## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻՔ

«Որք պիտի չձգեմ ձեզ» (Յիսուս)

Աշխարհի օրէնքին համաձայն մարդկային բոլոր բնական ծնունդները կը ծնին հօրմէ մը եւ մօրմէ մը:

Միակ բացառութիւնը եղաւ Աստուածորդին, որ երկնաւոր հայրութիւն եւ երկրաւոր մայրութիւն ունեցաւ:

Աշխարհիկ որբութիւնը որքանոց կունենայ եւ որդեգրեալ կը ճարէ: Երկնային Հօր եւ Վարդապետի որբութիւնը մի միայն վերնականով կը լեցուի, երբ յարութեան անմար բոցը վառ կը մնայ մեր մէջ՝ միաձնաէջ երկրորդ գալուստի սպասումով:

Մինչ այդ՝

Աստուած սիրեց իր Որդին եւ զայն աշխարհ դրկեց:

Յիսուս սիրեց մեղաւոր մարդիկը եւ աշխարհ եկաւ:

Մարդիկ Յիսուսով մարմնացած սէրը տեսան եւ փորձեցին Աստուած ու իրար սիրել:

Երկինք եւ երկիր, մարդիկ եւ Աստուած, մարդիկ եւ մարդիկ սիրով իրար գրկեցին:

Գրկեցի՞ն...

Աստուած հաւատարիմ է իր հայրութեան մէջ. մենք հնազա՞նդ ենք մեր որդիութեան մէջ:

**Ով որ ինքզինք որք չզգար՝ Աստուծոյ գիրկին գգուանքը կը զգայ:**

Լառնագա, 13 փետրուար 2022

## ՅՈՐԵՆԱՔԱՂ

*«Յնծութեամբ պիտի վերադառնան՝  
ցորենի խուրձերով ծանրաբեռնուած»*  
(Սաղմոս)

Միջերկրական ծովուն անհունութեան նայելով՝ հեռաւոր Կիլիկիոյ ցորենի ալիքները կը տեսնեմ՝ Գիրքին գերութենէն վերադարձողներուն ոտնաձայնին հնչիւններուն արձագանգով, երբ աղի ջուրը նախնեացս *«օրհնեսցի»*-ով հացի բուրմունք, խունկի ծուէն, հողի կոշտ կը դառնայ՝ հորիզոնին վրայ սփռուած ազգիս գիտակից զաւակներուն արթուն աչքին մէջ:

Այսքան տարի, դարեր արցունքացանք... ե՞րբ է ժամը տունդարձի, շեփորումի, ծնծղայի, նոր սերմնացու շաղ տալու, թարմ որաներ կապելու, մեր հունձքը ցնծութեամբ քաղելու եւ մեր հալալ սեղանը առանց վախի բանալու:

Կիլիկիա՛: Միայն *«Ցանկամ տեսնեմ»* երգ չես դուն. ցորեն ես, թոնիր ես, օճախ ես, աղօթք ես, մե՛րն ես:

Կիլիկիա: *«Երթամ ննջել...»*: Ո՛չ. *«Երթամ ապրի՛լ մեր ցորենի ծովերուն մէջ առ յաւէտ»*:

Լաոնազա, 14 փետրուար 2022

## ՄԵՂՔԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

*«Մեղս սպաներ ի խաչին» (Շարական)*

Աչքս յառած խաչելութեան պատկերին, քեզի կը բերեմ մեղքերուս անկրելի բեռը, մեզի համար խաչեալ Տէր:

Արարի չ Աստուած, ըստ պատկերիդ ստեղծած մարդը գրկեցիր՝ Եդեմի պարտեզէն Գողգոթա շնորհին շուրջառով պատած — արքայութեանդ հրաւիրեալ, փառքիդ արժանի, յաւիտենական կեանքիդ ժառանգորդ:

Ծնկաչոք, յանցանքներուս սեւ տոպրակը կարմիր քառաթելիդ ոտքին կը պարպեմ եւ կ'երթամ աշխարհ՝ անմեղ ապրելու ուխտի խաչս ուսիս:

Առանց քեզ տկա՛ր եմ, Տէր:

Առ զիս թելերուդ մէջ եւ մի՛ լքեր — տար պատրաստած օթեւանդ՝ արդարներու բնակարանին սպասաւոր թէկուզ:

**Զօրացուր զիս, Տէ՛ր, մաքուր պահէ մեղաւոր ծառադ՝ մի՛ շտ հետդ մնալու աղուոր խոստումով...**

Անթիլիաս, 10 մարտ 2022

## ԼՈՒՄԱԶԳԵՍԵԱԼ

*«Լուսեղեն եւ երկնային անթառամ պսակացն  
արժանի եղեն» (Ժամագիրք)*

**Տաճար-նաւը լոյս կը սփռէ՝ արեւագալի ողջոյնով...**

Դատարկ հոգիներ անանց բարիքներու նախաճաշակով կը լեց-  
ւին, հաղորդակից՝ Աստուծոյ ճգնաւորներուն, նահատակներուն, մար-  
տիրոսներուն, գովելիներուն, կամաւոր զոհերուն:

*«Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս...»:* Խունկը կը բուրէ, Լոյսը  
կ'առատանայ, կ'աղբերանայ՝ բոլոր շրթներէն հոսող Լուսաստեղծիչին  
գովքով:

Երկնայիններուն ընդելուզուած երկրածիններ իրար կը գերազան-  
ցեն նորածագ Լոյսի բարեբանութեամբ՝ բացուած երկինքը տեսնելու,  
իմանալի Լոյսին փարելու, աննիւթական Լոյսը հագնելու՝ համաժիր  
զգուանքին յանձնուած:

Խլուրդներ իրենց ծակերը կը մտնեն. մինչ Լոյսի՝ զաւակներ իմաս-  
տութեան, արդարութեան, խաղաղութեան Լոյսը ըմպած՝ նոր Կեանքի  
առագաստը կը բանան:

Անթիլիաս, 30 մարտ 2022

## ՈՒՂԻՂ ՃԱՄԲԱՆ

*«Գնալ յարդարութեան ճանապարհս  
եւ ի կեանսն յաւիտենից» (Ժամագիրք)*

Քառս-աշխարհը անիրաւութեամբ կ'եռայ. մարդը մարդուն մէջ  
գազանը կը տեսնէ՝ կը փրփրի, կը կատղի, կը յարձակի:

Կեանքի պայքարը կը մղուի՝ կեանքը կեանքո՛վ խորտակելու  
գինովն իսկ:

«Տէ՛ր, առաջնորդէ մեզ» ամենուր կը լսուի պաղատանքը՝ հոգիները  
սարսող կամարներուն տակ:

Ո՞վ է ականջ տուողը, ո՞վ է շարժողը:

Խուլ են մարդիկ յաւիտենականութեան արձագանգին ի լուր: Քա-  
րացած են խաղաղութեան շաւիղներէն ընթացող քայլերը: Քացիւած են  
խղճմտանքի կարասները, փտած են նմանին վերքը պարուրող լաթերը,  
քանդուած է Արարիչ-արարած սիրակապը:

Յանկարծ երեխաներու թափօրը կը յառաջանայ փողոցն ի վար՝  
մոմերով, ծաղիկներով, ժպիտներով, սպիտակ հագուստներով:

Չար սիրտերուն վերել՝ բարութեան, արդարութեան, խաղաղութեան,  
փրկութեան, շնորհի, սիրոյ՝ Աստուծոյ խաչ-ծիածանը կամարե-  
լով:

Անգամի մը համար՝ փոքրեր եւ մեծեր ճանապարհորդակից կը  
դառնան յաւիտենական կեանքի ուխտագնացութեան...

Անթիլիաս, 10 ապրիլ 2022

## ԾԱՌԱՅԱԿԱՆ ՏԻՐՈՒԹԻՒՆ

*Հայրապետական մաղթանքին առթիւ*

Մայր տաճարին զանգակը յարատել աւետարանչութիւն, առաքելութիւն, մարգարէութիւն կը դողանջէ. մին միաբանութեան կը զօդէ:

Աղօթական մաղթանքներ կը բխին սիրտերէ, Աստուածաշունչին պատգամը կ'արձագանգէ ամենուր. հովիւ եւ հօտ Յիսուսի կ'ազուցէ:

Անթիլիասը Քրիստոսի մարմինին եւ արինին հետ հանապազորդ ընտիր ցորենահաց կը դնէ հայ քրիստոնեայի հոգեսեղանին:

Մկրտութեան կոչումը եւ միւռնին բոյրը կը յորդին, հայ ինքնութեան կերտումի սանդուխը կ'երկարաձգուի երկիրէ երկինք. փրկութեան աւետիսը կը հնչէ:

Ոսկեայ հորթէն հեռանալու աստուածադիր հրահանգը՝ խոնարհութեան եւ տէրունի կամքի անդադրում կատարումի ճանապարհը կը բանայ:

Սուրբ Հոգիի վերանորոգումը նոր գինիով կ'արբեցնէ բոլորս: **Հայրապետական գաւազանը կը ծաղկի՝ լուսաթերթեր ցանելով...**

Անթիլիաս, 2 յուլիս 2023

## ՃԱՆԱՊԱՐՀ

*«Եւ վերջ... Երէկ վերջին 15 հոգին լքեցին Ստեփանակերտը»  
(Մարմարա օրաթերթ, Պոլիս, 2 հոկտեմբեր 2023)*

Երանի՛ հայորդիներուն վերջին մեկնումը ըլլայ այս. բայց ոչ Ար-  
ցախ-Հայաստան հայրենիքէն:

Արցախը լքե՞լ կ'ըլլայ: Եղաւ...

Արցախէն դուրս ելլե՞լ կ'ըլլայ: Եղաւ...

Հայորդիներ Արցախէն Հայաստան հասան այսօր. իսկ վաղը ո՞ր  
պիտի երթան...:

Ե՞տ Արցախ... Ռուսաստա՞ն... Ամերիկա՞...

«Բոլոր ճամբաները Արցախ-Հայաստան կը տանին». արդեօք տա-  
կաւի՞ն:

Ժամանակը ցոյց պիտի տայ...:

Ծաղկեփունջերով դիմաւորուած մարտիկները՝ ծաղկեպսակնե-  
րով ճանապարհուեցան անդենական:

Ուղին կ'աւարտի. յոյսը կը ներշնչէ, կ'ապրի, կ'ապրեցնէ...:

Մարդը գլուխը կ'առնէ կը քալէ, գերեզմանը իր տեղը կը մնայ...

Անթիլիաս, 3 հոկտեմբեր 2023

## ԱՅԲԲԵՆԱԿԱՆ

Աստուած Բարի,  
Գթառատ,  
Դուռն Երկինքի:

Զրահանդերձ Էական,  
Ընդունարան Թողութեան,  
Ժամանակ Իրական,  
Լրումն Խաւարի:

Ծագում Կեանքի,  
Հիացում Ձօնական,  
Ղեկավար Ճանապարհի,  
Մուտք Յարութեան:

Նշան Շառաւիղի,  
Ոչնչացում Չարութեան,  
Պարիսպ Ջանասէր՝  
Ռազմի Սրբութեան:

Վերին Տիրակալ՝  
Բամին Յրուեալ,  
Ի Փառաւորեալ Քերովբէներէն,  
Օտարացեալ Ֆաքիրներէս:

Լաւալ, 26 յունիս 2024

## ԱԻԱՐԱՅՐԸ

*«Խաչակից քեզ ընտրեցեր ըզդասըս քահանայիցն»  
«Հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ»  
(Շարական)*

Քահանաներու դասը եւ զօրականներու գունդը քրիստոնէական հաւատքի եւ սրբազան հայրենիքի ուխտով զինաւոր, պարզած են դրօշ ապստամբութեան՝ համայն հայութեամբ ծիածանուած:

Աւարայր է այսօր եւ ամեն օր հայ կեանքի բոլոր ճակատներուն վրայ. խաչ եւ սուր, գրիչ եւ մուրճ՝ աղօթքով, վկայութեամբ, մշակոյթով եւ քրտնաթոր աշխատանքով ամենուր կը կոփեն աշխարհաքաղաքացի հայը:

Ուխտապահներու մէջ ծուարած են նաեւ նենգ ուխտադրութները. հոգիները աճուրդի են դրուած. — հերոսին եւ դաւաճանին յաւիտենական պայքարն է հայ լինելութեան Տղմուտի ափին:

Ժամանակ դատաւորն արթուն՝ կը վճռէ դարձեալ ցորենին շտեմարանն ու որոմին հնոցը հայ պատմութեան կնիքովն արդար:

Մաքուր արիւնի հեղումը վկան է այսօրուան ու վաղուան տեւական յաղթանակին՝ լեցնելու համար մեր հոգիները պատմակերտ երթի հրաւերովն յաւիտենական կեանքի...

Վարդան սպարապէ՛տ եւ Ղեւոնդ երէ՛ց, կու գանք ձեր ետեւէն նոյնիսկ եթէ նահատակի մեր մարմինը վահանի վրայ հանգչի եւ սպիտակ պատանքով փաթաթուի, որովհետեւ **երկրաւոր մահը սանդուխն է երկնաւոր երանութեան:**

Լաւալ, 27 յունիս 2024

## ԱՍՏՈՒԱԾԱՄԵՐՉ ՄԱՐԴԸ

*«Գնալ յարդարութեան ճանապարհս  
եւ ի կեանսն յաւիտենից» (Ժամագիրք)*

Ի վերուստ՝ եօթը առաքինություններով օժտուած կը կենցաղավարենք այս աշխարհին մէջ:

Չարը եօթը մոլություններով կը հրապուրէ մեզ եւ մեղքի ստրկութեան շղթան կ'օղակէ մեր վիզին:

Խոնարհութիւն-հպարտութիւն, այլասիրութիւն-նախանձ, հեզութիւն-բարկութիւն, աշխատասիրութիւն-ծուլութիւն, ողորմածութիւն-ագահութիւն, բարեխառնութիւն-որկրամոլութիւն, ողջախոհութիւն-բղջախոհութիւն՝ իրար հիստուած կ'առճակատին յաղթելու մոլուցքով խթանուած:

Քաջութիւնն ու վախկոտութիւնը խօլաբար կը վերիվարեն մեզ՝ առաքինի մարդու եւ մոլի մարդու շապիկը հագցնելով-հանելով շարունակաբար: Արդարութեան եւ մեղաւորութեան վերելակը կը բանի:

Ի՛նչ ճիշդ պիտի ըլլար եթէ մարդուն մէջ միայն անաճական մարդը մնացած ըլլար...:

Երբեմն սէրը կը թագաւորէ, երբեմն՝ ատելութիւնը. բարին ու չարը կողք-կողքի կընթանան:

Յանկարծ՝ փրկութեան ձեռքը կը բռնէ մեր կարկամած ձեռքը եւ մեզ վեր, իր մօտ կը հանգրուանէ. խաղաղութեամբ եւ խնդութեամբ կը հետեւինք Աստուծոյ՝ յիշելով մեր մօր ամենօրեայ աղօթական մրմունջը. *«Տէ՛ր, խնդրանքս է, որ զաւակս քեզմէ երկիւղի եւ իր նմանները սիրէ: Ան քեզ թող սիրէ մի միայն մարդի՛կը սիրելով եւ ո՛չ թէ քեզմէ երկիւղի մարդոցմէ սարսափելով»:*

Առաքինություններուն առաքինութիւնը սէրն է. սէրն է յաւիտենականը...

Լաւալ, 1 յուլիս 2025

## ԱՐԴԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

*«Համարեա զաշխատութիւնս մեր ի գործ արդարութեան  
եւ ի պտուղ աստուածպաշտութեան» (Ժամագիրք)*

Մարդիկ կամաւոր առանձնութեան համատարած տագնապին մէջ կը տուայտին:

Հարազատներ, դրացիներ, քոյր, եղբայր օտարացած են իրարմէ:

Երթ ու դարձի կամուրջները ածխացած թափոններ են:

Ընտանիք կազմած եւ զաւակներ ու թոռներ պահած ծերանոցներու մէջ լքուած մեծ ծնողներ՝ ակնդէտ մահը կը սպասեն:

Այս տարտղնուած, տարանջատուած, մեկուսացած, բաժնուած եւ մինչեւ իսկ թշնամացած ընկերութեան մէջ՝ ո՞վ եմ ես, դուն, մենք, ամենքս:

Միայն միտքը ուժի՛ գլանով կը տիրակալէ:

Զրկուած ենք մարդկային սիրտի բաբախումէն, խղճմտանքի թրթիռէն, հոգիի թռիչքէն:

Երնէ՛կ այն օրերուն, երբ բարեկամութիւն ու մտերմութիւն սրբութիւն կը բուրէին եւ մարդը մարդո՛ւն մէջ Աստուծոյ պատկերը կը տեսներ:

**Բարի, արդար, մարդասէր եւ աստուածասէր մարդ կը փնտռենք:**

Կեանքի ուղիին վրայ՝ ակնդէտ մարդը եւ մարդամերձ Աստուած արդարութիւնը կը գտնեն, կը գրկեն, կը բաշխեն. վերաթեւեալ երկինք կը թռչին:

Ընտրեալ մարդիկ արժանընդունակ արդար գործերով կը զարդարուին, առատապարգեւ իրաւունքով կը բերկրին, հրեշտակներ ուրախութեամբ կը թելածեն...:

Լաւալ, 17 յուլիս 2025

## ՔԱՂԱՔ ԱՍՏՈՒԾՈՅ

*«Ուրախ եղէ ես որք ասէին ցիս,  
ի տուն Տեառն երթիցուք մեր»  
(Սաղմոս)*

Մեր տուններէն Տիրոջ տունը տանող արքայութեան նեղ կաճանէն կ'ընթանանք՝ աստուածային շնորհներու ընդունարան դառնալու ուստոտուն քայլերով:

Կերկարաձգուի դարաւոր հրաւերը. *«Օրհնեալ է Աստուած: Ո՛վ բարի քրիստոնեայք եկայք ի սուրբ եկեղեցի...»*

*«Մտէք առաջի նորա ցնծութեամբ...»*: Խնկանուէր աղօթքներով կը տաճարանանք, հրեշտակներու պարակցութեամբ կը սաղմոսենք. մեր նեղութիւններէն ձերբագատուած՝ աշխարհի թոհուրոհին կը վերադառնանք:

Լուսածոր խորանէն պայծառացած, մանանայի անսպառ սափորը շալկած՝ ծառայական կեանքի շնորհագարդ սայլակով դէպի սրբութիւն կ'երթանք:

**Եկեղեցի — եկ եւ եղիցի — եղեւ...**

Լաւալ, 2 օգոստոս 2025

## ԱՍՏՈՒԱԾԱԼԻՑ

*Ցնծացաք եւ ուրախ եղաք  
զամենայն ատուրս կենաց մերոց»  
(Ժամագիրք)*

Արեւածագ: Աղօթքի բաց հրաւեր: Աստուծոյ հետ ըլլալու պահ:  
Կեանքի իմաստի փնտռտուք: Իմանալի լոյսի ըմպում: Որդեգրութիւն:  
Երկնացնծութիւն:

Իմաստութեան լոյսը ցմրուր կը դատարկէ մեղքին տիկը:

Աստուած արդարութեան շուրջառով կը պատէ մարդիկը:

Օրհներգութիւնը կը բանայ երկինքի դուռը — Աստուած եւ մարդ  
կողջագործին հորիզոնի շուրթին, ձեռք-ձեռքի բռնած կը շարունակեն  
քալել ճշմարիտ կեանքի ճանապարհը...:

Աստուած ամեն բան կը տեսնէ, կը լսէ, կը տնօրինէ՝ իր կամքին  
համաձայն. «Ով որ ականջ ունի լսելու, թող լսէ՛»:

Աստուածաշունչը կը խօսի...

Լաւալ, 8 օգոստոս 2025

## ԱԻԵՏԱՐԱՆԵԼ ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ

*«Մեծապայծառ ջահիլ հաւատով եւ սիրով իւրեանց,  
ծագեցին զլոյս աստուածգիտութեան ի սիրտս մեր»  
(Ժամագիրք)*

Չորս աշակերտներ, Տիրոջ գահակառքին լծուած, հրեշտակային թելերու թափահարումով երկինքէն երկիր կիջնեն:

Մարդը՝ տէր ըստ պատկերի Աստուծոյ, առիծը՝ գազաններու թագաւոր, եզը՝ ընտանի անասուններու արքայ, արծիւը՝ թռչնազգիներու տիրակալ, պատարագիչ Քրիստոսի հետ բազմած են սուրբ սեղանին վրայ:

Երկնային «*խաղաղութիւն ամենեցուն*»-ը կ'անձրեւէ: Կը հնչէ սարկաւազին «*երկիւղածութեամբ լուարուք*»-ը: Խաւարը կը ցրուի, փակեալ դրախտը կը բացուի, բանաւոր ողջակէզը կը զենուի, նոր արարածը կը ծնի:

Հաւատացեալներ քրիստոսակեդրոն կեանքի կը հրաւիրուին: Հաւատքի վկայութեան, յոյսի սպասաւորութեան, սիրոյ զօրակցութեան բաղեղեալ ընտանիքը կը կազմուի, «*եկեղեցիս մի անձն եղել*»-ը կը ճշմարտուի:

Չորս աւետարանիչները միաձայն կը պատգամեն. «Պարզ կեանքով ապրեցէ՛ք, առատօրէն սիրեցէ՛ք, խորապէս գուրգուրացէ՛ք, ազնւօրէն բարբառեցէ՛ք, եւ **մնացածը Աստուծոյ ձգեցէ՛ք...**»

Լաւալ, 28 օգոստոս 2025

## ԱՇԽԱՐՀԱԿԱԼՆԵՐ

Երկու-երկու տասներկու երանելիներ աշխարհը շրջեցան եւ երկինքի անբծութիւնը ցանեցին:

Գալիլիոյ ծովէն Հոգիին շնորհի աւագանը մտան՝ հրաշագործեցին, հրազինեցին, մարդ որսացին, դարանակալ մեղքը ընդմիշտ խափանեցին, Աստուծոյ կամքը ուսուցին, **առաքելագործեցին**, իրենց անձերը պատարագեցին, երկնային անուշահոտութիւնը խնկեցին, աստուածգիտութեան լոյսը սփռեցին:

Սուրբ հարսանիքին հրաւերին տկար քայլերով ընդառաջեցին, ամուր ընթացքով ամենուր արշաւեցին, մեծ նուաճում արձանագրեցին, եկեղեցին զարդարեցին, **առաքելական կոչումը ցոլացուցին**:

Անբանակ աշխարհակալներ, նոր Սիոնի անխախտ սիւներ, քրիստոնէութեան տարածիչներ, փրկութեան մատռուակներ, Աստուծոյ մօտ բարեխօսներ:

Լաւալ, 10 սեպտեմբեր 2025

## ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ

Հողեղեններուն կցորդեալ հրեղեններ, սերովբէներու եւ քերովբէներու բազմաչեայ հոյլեր, անմարմին դասեր, բիրաւոր զուարթուններ, Աստուծոյ սպասաւորներ, մարդոց պահապաններ, նեղ եւ անձուկ ճանապարհին ուղեկիցներ:

Նահապետներուն եւ մարգարէներուն, առաքեալներուն եւ աշակերտներուն, Աստուածամօր եւ Յիսուսի քոյրերուն ու եղբայրներուն շնորհի առատաբօլի վտակներու աւետաբերներ, երկրորդ արարչութեան փողահարներ, անմահութեան հրաւիրակներ, երկնային փառաւորութեան լծակիցներ:

Պատարագեալ Քրիստոսի սուրբ սեղանին շուրջ խմբուած, անապական կեանքի եւ յաւիտենական բնակութեան նախաճաշակին հաղորդակից, բոցանշոյլ եւ փայլակնացայտ վեցթեւեան հրեշտակներուդ պարակից, կեղանակենք. *«Սուրբ, սուրբ, սուրբ. ովսաննա՛ բարձունքներու մէջ. փրկէ՛ մեզ»*:

Լոյսը մեծապայծառօրէն կը ճառագայթէ:

Սրբութեան սրուակը մեր գլխուն վրայ պարպուած է:

Զուարթերես դուրս կ'ելլենք եկեղեցիէն. **խնամակալ թեւ մը կը հանգչի մեր ուսին....:**

Լաւալ, 29 սեպտեմբեր 2025

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

## ՈՐԴԵԳՐԵԱԼԴ ՄԿՐՏՈՒԹԵԱՄԲ

*«Որդեգրություն շնորհելով ի ձեռն մկրտության» (Շարական)*

Ընկերոջս տղան՝ Հայկը կիրակի օր կնքեցինք. ան Աստուծոյ տղան դարձաւ, եկեղեցիին եւ ազգին զաւակը եղաւ: Կնքահայրը ես էի:

Զուր, աղանի, միւռոն, հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն:

«Ընդայ», «ընկայ», «ինկայ», «ծնծդայ», «ընծայ»... եւ մկրտութիւն:

Յանուն ահեղ Հօր՝ հաւատք եւ ջուր, անարատ գառն Որդւոյ՝ յոյս եւ աղանի մխիթարիչ Հոգւոյն Սրբոյ՝ սէր եւ միւռոն — մկրտուեցաւ

Լոյս կը ճառագայթէր եկեղեցիէն, աւագանէն, Հայկէն:

**Տէ՛ր, լուսատօնովդ միշտ ջերմ պահէ՛ր ինձ Հայկ-Հայկուհիներուն հոգեւորներ:**

Անթիլիաս, 18 յունուար 2014

## ՀՈԳԻՆԵՐՈՒ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ

Ձօն՝ Մինկափուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

*«Բարեխօս ունիմք զմեծ խոստովանողն  
Քրիստոսի ... լուսավորիչն հայաստանեայցս  
աշխարհի» (Ժամագիրք)*

Բա՛ց դարպաս: Արդար մարդու հոգիին պէս ճերմակ, կանաչ ծաղկուն դարաւոր քար-ծառ:

Արարատէն պոկուած շնչող նշխար, անդրարդի քաղաքի սիրտին բազմած՝ Խոր վիրապի քոյր վկայարան, Մեպուհ լեռի ճգնարանի յուշարձան — մաքուր աղօթք, բիրեղ անձրեւ, զով մրմունջ, ջերմ ովասիս, արթուն աչք, *Արմինէն Սթրիթ*:

Հայ մո՛ւմ, խո՛ւնկ, զա՛նգ, շարակա՛ն — հաւատալից հոգիներու գահաւորակ, սինկափուրեան կարգ-կանոնի խճանկար, հայու խաչի ճամբու ուրուանկար, քարտէս-սլաք հայկեան, երկնանիզակ հոգետաճար:

Սո՛ւրբ հայր: Սո՛ւրբ խորան:

Հայ, օտար զբօսաշրջիկներ խառն — չին, չան, ճին, ճան, ջին, ջան, ջան, ջան. նկար, յուշամատեան, կայքէջ, մեկնում անճար. անցելայուշ որբացած մայր, աշխարհասփիւռ հայ, վա՛յ:

Խոստովանողդ մեծ, յորդ քաղաքի զիլ աղմուկի անքուն հրեշտակ, արի պահակ, մաքրարար հոգետուն, յարաշարժ կարաւանի ծնկաչոք ուղտ՝ **սուրբ Գրիգոր, Տիրոջ մօտ մեզ բարեխօս...**

Մինկափուր, 4 փետրուար 2014

## ՎԵՐՅՈՒՇ

Քառասուն տարիի անջրպետի միացում՝ Պուրճ Համուտի Սան-ճազ գեմբեն Մոնթրեալ...

Ս. Վարդանանց եկեղեցի, Թեքեան վարժարան, ջերմ դրացնություն, մանկական խաղեր, պատանեկան ուսումներ, սեւերու մեջ փաթթուած մեծ մայրիկներ, Տէօթ-Եոլ-Իսկէնտերուն ընտանեկան կապեր, հին սերունդ-նոր սերունդ անագուցեալ կեցութիւն, լիբանանեան քաղաքացիական պատերազմ, հապճեպ մեկնում, պարտադրեալ խրգում:

Նոր երկիր, նոր կեանք, նոր միջավայր, նոր մարդիկ, նոր ընտանիք, ամուսնալուծում, օտարացում, վերամուսնություն, քանատացի հարս, կիսահայ զաւակներ, անակնկալ վերահաստատում հին կապերու եւ սրտակցութեան, հայու ճակատագիր, հայու բախտ, հայու ճանապարհ, հայու հին/նոր ողջագուրում, հանգոյց, մեկնում, վերամիացում, բեկում, հայ-պայ...

Եւ այսպէս՝ մինչեւ վերջին կայան: Ո՞ւր... Հայաստա՞ն, Քանաատա՞, Լիբանա՞ն, Չինաստա՞ն: Ամեն տեղ եւ ոչ մէկ տեղ. խարսխեալ գոյութիւն, արմատեալ ինքնութիւն — յուշող մեղուններու ցնորալից բզզիւն, միշտ ու միշտ յուշ, վերյուշ, նոր յուշ, անյուշարար բեմականացում:

Հայագոյութիւն, հայակեցութիւն, **հայաթափութիւն...**

Մոնթրեալ, 4 մարտ 2017

## ՎԱՅՐԿԵԱՆ ՄԸ ԵՒՍ

*«Քորոնաժահր»-ի մանգաղով հնձուած հայորդիներուն*

Կեանքի խօլ մրցավազքին մէջ, անհուն ժամանակէն թէկուզ վայրկեան մը եւս տրուէր ինծի...

Իւրաքանչիւր ապրած օրս կեանքիս վերջին օրը նկատելով՝ լաւագոյնս պիտի ընէի թերեւս միայն ինծի համարկամ ծանօթին-անծանօթին սիրով ընծայուելով:

Կոտրած սրտեր իրար կապած, աշխարհի մաղձն ու քաղցրը ի մի բերած, շահ փնտռած, վայելք գրկած, ցաւով, քէֆով օր անցուցած, ինկած-ելած, խախտած նժար, սնանկ սակարկութեան նստած, հաշ-ւեփակ կնքած. Կեանքէն ա՛յս էր միայն ինծի տրուած:

Երազներս այնքա՛ն հեռու եւ մօտ, սրտիս զարկերը այնպէ՛ս ներդաշն, հարց-պատասխան ուռկան հիւսած, կեանքը նուաճելու խաբկանքը յար, անմահութեան լեղի համով զիս համակած. Ասո՞ր համար աշխարհ եկայ:

Շարժուն շուք, ամենը եւ լաւագոյնը խլելու փորձ, կեանքս ամբողջ ծրագիրներ՝ մատներու արանքներէն սահած, ժամանակի թելէն հատիկ-հատիկ փրթած արդէն՝ բախտի կասած անիւ, յաւէտ չշահուելիք վիճակահանութեան տոմս:

Արարչութեան խորհուրդի փաթեթը կը քակուի: Թէեւ անհուն ժամանակէն վայրկեան մը եւս ուզելն անհեթեթ է...

Ինքզինքս գերազանցելու առիթը չկայ. հարցումները առկախ, հեւքը դադրած, կեանքի քառուղիներուն վրայ բաժնուած, մահով ի մի եկած, յաւերժութեան մէջ թաւալ մըն եմ, անքուն ննջեցեալ մահուան փոսին մէջ, յարգանդ երկրի՝ հող էի եւ կրկին հողին վերադարձայ:

Դո՛ւն, ո՛ղջ ընկեր, կեանքդ շահէ՛ իմ կեանքիս տեղ. Կեանք քեզի՛. Բոնէ՛ վայրկեանը, պահէ՛, գգուէ՛, բաշխէ՛, ինծի՛ համար, մեզի՛ համար. Բա՛ց հորիզոն, լո՛յս հոգիով, յոյսի՛ն ճամբորդ, դէպի՛ արեւ, դէպի՛ նոր կեանք. Անփորձանք մնաք. Ցտեսութի՛ւն ի վերին Երուսաղէմ՝ արդարներուն վերապահուած օթեան, երկրորդ գալուստ, մեռելներու յարութիւն, Փրկիչը դիմաւորող յափշտակութիւն, ահեղ դատաստան, անդարձ դատակնիք. Ես խոնարհեցայ եւ Տէրը փրկեց զիս, եկուր օրհնեա՛լ ծառաս:

Ընկե՛ր, ինչ որ ես չկրցայ ընել, դո՛ւն ըրէ այսօր – վաղը կրնայ շա՛տ ուշ ըլլալ, գուցէ նաեւ բնաւ չգայ...

Մոնթրէալ, 10 մարտ 2021

## ԿԵԱՆՔԷՆ ՕՐ ՄԸ

Կապրի կեանքը իր երկփեղկուած աշխարհին մէջ: Կանդրադանայ, որ կեանքին մէջ ոմանք կեանքէն կեանք կերթան եւ ոմանք՝ կեանքէն մահ:

Մահէ՞ն ետք... Ո՞վ գիտէ: Ո՞վ ստոյգ պատասխանով կրնայ բանալ խոր խորհուրդը կեանքին: Կրօնները մասնակի լուծումներ կը բերեն՝ հաւատքին թելերուն կպած, իմաստուններ վերլուծումներ կը ծամեն, շատեր հո՛ւս կը փակեն իրենց բոլոր հաշիւները, մինչ ուրիշներ կը թակեն երկինքին դուռերը, ոմանք հոս կ'ապրին իրենց դրախտը, այլք՝ դժոխքը:

Ամեն օր, օրը արդար աշխատանքով աւարտած, տուն կը մտնէ եւ իր համեղ հացը կուտէ՝ մօրը օրհնալից անուշ նայուածքին տակ, մինչ դրացիին մանուկները քիչ անդին կը ճռուողեն:

Պարտէզ կ'ելլէ եւ պտղատու ծառերը կը ջրէ ամեն օր, իր ցանկալի գաւակներուն կարօտը առնելով:

Կեանքը յղի է չնախատեսուած պատահարներով: Ամենացնցիչ ստորին անակնկալը կը պատահի, երբ կը կարծէր, թէ իր բարեկամները լաւ կը ճանչնար եւ իր ամենահարազատ ընկերը կը հեռանայ իրմէ՝ ամենէն աւելի անոր կարիքը ունեցած վայրկեանին: Սրտակցութիւնը կը մորթուի կեղծաւորութեան զոհասեղանին վրայ: Ան աւելի կը փարի իր ծառերուն...:

Ամեն առտու արեւին հետ կ'արթննայ, աչքերը կը շփէ, խաչը կը հանէ, սուրճը կը խմէ եւ իր գործին կը վազէ:

«Ա՛յս է կեանքը» կը հարցնէ: «Թերեւս ա՛յս իմ կեանքս է...»: Կը լռէ: Երջանկութիւնը ո՞ր սակարանէն կարելի գնել:

Օրերը կը թաւալին. կեանքը կը վազէ. օր մըն ալ... *թըփ* կ'իյնայ:

Լաւալ, 10 մայիս 2023

## ՄԱՀ

*«Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն,  
որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից  
ննջեցելոցն» (Շարական)*

Այսօր Ամերիկայի մէջ մահուան հրեշտակը թակեց ընկերոջս  
կեանքի դուռը: Հեռու եմ իրմէ եւ այնքա՛ն մօտ...:

Լաւերը աւելի կանո՞ւիս կը մեկնին այս աշխարհէն:

Կեանքի հրեշտակին թելերով պարուրուած ապրեցանք միասին.  
եւ հիմա, —ինչպէս կեանքի օրէնքն իսկ է—, ինք կերթայ առանձին՝  
աշխարհէն անդին: Ո՞ւր. ո՞վ ստոյգ գիտէ: Ես կը մնամ առանձին՝  
աշխարհին մէջ, իր սիրածներուն հետ:

Գացողը կերթայ, մնացողը կը մնայ՝ օր մը ինք եւս երթալու  
համար: Ո՞ւր. հոն՝ ուր **վերահանդիպելու խոստումը առկաիս կը մնայ:**

Շէ՛ն ընկեր, կեանքին մէջ ապրեցար մահուան աչքերուն մէջ նայե-  
լով ընդերկա՛ր. հիմա կերթաս մահէն անդին եղող կեանքը գրկելու  
յաւիտեա՛ն:

Երթաս բարով, մնանք բարով՝ Ամենաբարիին գծած ուղիին մէջ...

Ժնեւ, 28 յունիս 2023

## ԵՐԿՆԱԲԱՇԽ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

*Միքելիի մը անժամանակ ննջումին առթիւ*

Երկինքը նոր գծիկ մը կը տեսնեմ: Դուն ես, հարազա՛տս: Աղաւնիին ու բուին թեւածումին ընկեր, կը թռչիս կեանքդ հոն՝ վերը ապրելու...:

Կեանքիդ թելը շուտ փրթաւ: Տարիներուդ ճախարակը այլեւս կոլորի անդենականին մէջ, մինչ կարօտի կրակը առկայծ պիտի մխայ մեր սիրտերուն մէջ փակ:

Հարսանեկան դագաղիդ դիմաց՝ *«Խաղաղութիւն բոլորին. Աստուծոյ երկրպագենք»* մաղթեցի, մխիթարութեան շիթ մը պարգեւելով սիրելիներուդ, մնացողներուս, եւ քեզ Արարիչին յանձնելով՝ իր կամքին խոնարհելու ակամայ համամտութիւնը յայտնեցի:

Հիմա, այնպէս կը զգամ, որ դուն արդէն աշխարհէն վեր ու դուրս էիր՝ եզակի արուեստիդ ոլորտին մէջ հողմակոծ: Տարբեր էիր, գերիբաւ ու հոգեբարձ:

**Շատ ցանեցիր եւ քիչ քաղելով մեկնեցար...:**

Ժպիտդ մեզի պարգեւ թողուցիր, եւ ան բաւ է յիշատակիդ քաղցրութիւնը ըմպելու՝ մինչեւ վերահանդիպումը հաստատ ու անդորր, մինչեւ վերամիացումը համայնական... Հոն՝ միատեղ վերապրելու յաւիտեան:

Անթիլիաս, 1 յուլիս 2023

## ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

*«Ժամանեցուք յանքոյթ եւ ի խաղաղ նաւահանգիստ  
յաւիտենական ի կեանսդ» (Ժամագիրք)*

Եղեմի պարտեզէն արտաքսումով՝ մարդկային կեանքը ողբերգական ելք մը ունեցաւ: Նախամարդիկ քարափ մտան՝ գեղեցկութեան բարձունքէն տգեղութեան վիհը հրուելով, անմեղութեան փայլփլուն պատմութեանը հանելով, մեղքի բորբոսած քուրջը հագնելով:

Իսկ երբ Շնորհաբաշխը յայտնուեցաւ, պատուհասի ցասումը երանաւտ հրաւեր դարձաւ՝ ի պատասխան *«արդարութեամբ մի՛ դատեցես, այլ գթութեամբ քով քաւեցես ... գրեալ զանուն իմ ի դպրութեան կենաց»* զղջումնալից խոնարհումին:

Լոյսը խաւարին մէջ ծագեցաւ, կեանքը մահէն ետք վերափրթեցաւ, երկինքի արքայութեան դուռը բացուեցաւ. բարեպաշտ ծառայութեամբ պճնուած՝ թողութեան ողջոյնին արժանացած մարդիկ վերնականներուն դասակցեցան:

Գերեզմանատունին մէջ եմ: Ննջեցեալ հարազատներուս պարբերական այցս կը կատարեմ: Իւրաքանչիւր տապանաքարի վրայ երկու թուական կը կարդամ. ծնաւ – մեռաւ: Այս թուականները կը տարբերին. սակայն զանոնք իրարմէ բաժնող գծիկը (–) նոյնն է: Այս գծիկը նշուած թուականներուն իմաստ կու տայ. մեր ապրած կեանքին տեւողութիւնը կընդգծէ: Մեր կեանքն իսկ գծիկ մը չէ՞՝ անմահութեան անկասելիօրէն թաւալող էջերուն վրայ...:

Կեանքի ընթացքին մեր նշաձողած ձգտումներն ու շոյած երազները մեր յիշատակներէն գերազանց են. անոնք մերն են, յիշատակները մեզ վերապրողներուն:

Յաւիտենական կեանքի քաղցրութիւնը ձգտումները, երազներն ու յիշատակները անդրանցող անստուեր գեղեցկութեան մէջն է՝ երբ **մենք առ յաւիտ Աստուծոյ ժողովուրդը պիտի ըլլանք եւ Ան՝ մեր Աստուածը...**

Լաւալ, 26 սեպտեմբեր 2025

ԻՐԱՊԱՇՏԱԿԱՆ

## ԽԱՉՈՒԱԾ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆԸ

*Միացեալ Կիպրոսի մը սիրոյն՝ վստահութեան կերտում*

Թոչունը փշաթելին վրայ կ'ոստոստէր, երբ կատուն շիլ նայուածք մը նետելով փողոցը անցաւ եւ տուն հասնելու առօրեայ հելքով մարդիկ արագ-արագ «սահման»-ը կտրեցին:

Մինչ՝ խումբ մը կիպրացիներ Նիկիոսիոյ յոյն/թուրք հատման գիծին վրայ վստահութեան, համակեցութեան, վերամիացման երազով կ'օրօրուէին:

Բեմէն՝ յապաղած խոստումներու նոր բանաձեւեր, քաղաքական հաշիւներու վերասահմանուած խաղեր, եւրոպական միջամտութեան սին կեցուածքներ, կրօնական առաջնորդներու, դիւանագիտական անձնակազմերու եւ ոչխարամիտ ժողովուրդի պատրանաթափ գումար:

Ամբոխին մէջ՝ քրիստոնեայ, իսլամ, յոյն, հայ խառնիճադանճ: Կեղծ ժպիտներ, թոյլ ձեռքսեղմումներ, անուշ խօսքեր, պաղ նայուածքներ, թաքուն ծրագիրներ, գեղեցիկ նկարներ, յոյսի ծուէններ. վաղն իսկ ամեն բան մոռցած ըլլալու եւ նոր կեանք սկսելու ինքնախաբէութիւն:

Յետո՞յ ... Վերադարձ՝ կեանքի դառն իրականութեան, հաշուարկութեան, թշնամութեան, թրքաբարոյ սակարկութեան, յունական արմատականութեան եւ հայկական միամտութեան:

Երեք ժամ ետք բոլորս ալ մեր տուններն ենք, մեր նեղ օղակին մէջ սեղմուած:

Խաչուած վստահութիւնը փշաթելերուն հիւսուած, կատուին պոչին պլլուած, խեղճ մարդոց հոգիին մէջ ծուարած կը մսի առանձինն՝ մինչեւ ժամանակի գլանին շրջադարձ նոր աւետումը...

Նիկոսիա, 15 ապրիլ 2014

## ՄՈՆԱՔՈՅԻ ՇՆԻԿՆԵՐԸ

Նորին նախապատուրթին, պարարտ տէր-տիրուհի, մշտաշարժ սպասաւոր-սպասուհի:

Մայթերուն՝ ծաղիկներ, մեզի երիզներ եւ ... անուշիկ շնիկներ:

Չեն հաջեր, կը գգուրրտուին, իրարու նազ կընեն, կը դիտեն, կը հիանան: Հապա անոնց ադամանդակուտ տէրե՞րը:

Որքա՛ն ծախս. *վիլլա* այսինչ, *վիլլա* այնինչ:

Եթէ նոյնիսկ շուն պիտի ծնիս, բախտաւոր աստղի տակ **Մոնաքոյի շնիկ պէտք է ծնիս:**

Մոնաքո, 28 մայիս 2014

## ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴԸ

Ճերմակ վարդ մը՝ լուացուած Շանգ-Էլիզէն եգերող նստարանի մը վրայ հանգչած դոյլին մէջ, շաբաթ առաւօտեան ժամը ութին իր մենութենէն կը ձերբագատուի ձեռքիս մէջ:

Ո՞վ թողած է զայն հոս. ուրբաթ գիշեր քանի ձեռքերէ անցա՞ծ է ան. ի՞նչ սերեր, ի՞նչ խոստումներ, ի՞նչ խաբկանքներ գրկած են զայն երկուքով:

Ամեն սիրակապ երկկողմանի է. մէկը կը սիրէ, միւսը սիրելը չարգիլեր. սերը երկուքը մէկ կընէ. սերը սիրով կը ծաղկի:

Սխալ ձեռքի մէջ է ան հիմա — ես ի՞նչ պիտի ընեմ զայն. որո՞ւ պիտի տամ:

Ճերմակ վարդը գորովալից կը դնեմ իր տեղը եւ ճամբաս կը շարունակեմ...

Բարիքին փոխան շնորհակալութեան ակնկալիք չունիմ: **Վարդ-բարիքին բուրումը կը բաւարարէ բոլորս:**

Փարիզ, 31 մայիս 2014

## ՄՊԻՏԱԿ ԱՍՏՈՒԱԾ

*«Լուարոյք զայս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի.  
զի Աստուած ընդ մեզ է» (Ժամագիրք)*

Երէկ առաւօտ տունիս պատուհանէն դուրս նայեցայ. ձիւնին հետ, ձիւնին մէջ իջար պարտէզիս վրայ եւ հոգիիս մէջ. *«Տէ՛ր իմ, այս ի՛նչ սպիտակութիւն, անբծութիւն ...»*: **Աստուած մեզի հետ է:**

Այսօր սեւ էր դուրսի ձիւնին մակերեսը. մաքրեցի. տակը դարձեալ սպիտակութիւն, անբծութիւն...: Աստուած մեզի հետ է:

Նե՛րսը, հոգիիս մէջ. միայն Տէրը գիտէ:

Հետքեր կան ձիւնին վրայ. գիշերը անասուններ այցելած են պարտէզս: Սկիւռներ ծառերուն վրայ կոստոստեն:

Արարիչը բացած է ամպերուն վարագոյրը եւ ճերմակ սաւան փռած:

Երկնային խաղաղութիւնը բամպակ-բամպակ իջած է քաղաքին վրայ: Ամենակայ եւ ամենատեղ Աստուած մեզի հետ է:

Աստուած ընդ մեզ է, *«զի Աստուած էր Բանն»*: Ներգործութիւն, վստահութիւն, փրկութիւն...:

Աստուած մի՛շտ մեզի հետ է: *«Անոր սէրը յաւերժական է»*:

Իսկ մե՞նք... *«Տէրը ինձի հետ է, ես վախ չունիմ»*:

Մոնթրէալ, 12 մարտ 2021

## ԿՈՐՄՈՒԱԾ ԷՐ... ԳՏՆՈՒԵՑԱՐ

Առաւօտ կանուխ, մեծ խանդավառութեամբ *laptop*-u *back up* ընելու երկար ատեն ձգձգած պարտականութեանս լծուեցայ: Ուրախացայ, որ երկու ժամուան լարուած ճիգէս ետք աւարտեցի այս կենսական աշխատանքը:

Իրիկունը երբ *file* մը կը փնտռէի անդրադարձայ, որ երկու *folder upgrade* ընելու փոխարէն ջնջած եմ. առաւել՝ *recycle bin*-ն ալ դատարկած եմ, չար վայրկեանի մը մի քանի սխալ կոճակներ սեղմած եմ. ա՛յս է ամենը:

Բայց... ասոր հետեւա՞նքը: Այս երկու *folder*-ը վերադարձնելու կարելիութիւն չկայ այլեւս: Եղածը եղաւ. պետք է ծայրէն սկսիմ. *Technology*-ն կատարեալ չէ:

Երկու կարելոր ծրար աղբարկղ նետեցի: Իւրաքանչիւրը ունէր մօտաւորապէս 300 *file*. մին կը կրէր «Հայ մամուլէն էջեր (կարդացուած)» պիտակը, միւսը՝ «Հայ մամուլէն էջեր (կարդացուելիք)» պիտակը: Կարդացուածը ի պահ պիտի մնար, կարդացուելիքը կամաց-կամաց պիտի կարդայի. երկուքն ալ քորոնածաւորի մեկուսացումի արգասիքն էին:

Հիմա կը մտածեմ. ի՞նչ բախտաւորութիւն, որ կորսուած նիւթերը առցանց կան: Ինծի կը մնայ վերայցելել, վերագտնել, վերընթերցել, վերավայելել, վերահաւաքել, վերապահել եւ... չվերակորսնցնել:

Անշուշտ շատ ժամանակ պետք է տրամադրեմ այս բոլորին համար, սակայն ուրախ եմ, որ անփոխարինելի կորուստ չէ. քանի՜ հազար *file*-եր կան *laptop*-իս մէջ, որոնք տարիներէ ի վեր չեն բացուած — ժամանակ չկայ:

Վերջերս բարեկամ մը մարդկային մահը ամսուսալով կը հաստատէր. «Երկվայրկեանի հարց է. սիրտի զարկիդ կենալն է. գացիր»: Համացանցը չի՛ յայտնէր, թէ իւրաքանչիւր վայրկեան քանի *folder* եւ *file* մեր սխալով կ'ոչնչանայ, բայց կը հաշուարկէ, թէ ամեն վայրկեան մօտաւորապէս 106 մարդ կը մահանայ եւ 250 մարդ կը ծնի:

Կը վերյիշեմ, թէ «Հայ մամուլէն էջեր (կարդացուած)» *file*-իս մէջ ունէի *Յաւաջ*-էն քաղուած Վահէ Օշականի «Բանաստեղծի ուրուագիծ (Տպաւորութիւններ Եղիվարդէն)»-ը: *Online* կը վերաբանամ զայն եւ կ'ըմբռնեմ. «Առաջին հարցումը որ կը հարցնէ ինծի **մահուան վախը ունի՞ս** է, ու հարցումը ետ ինքն իր վրայ դարձուցած եւ առանց պատասխանի սպասելու կը յարէ՝ **եւ չունիմ**»:

Մեզմէ ոմանք մահէն կը վախնան, իսկ ոմանք կեանքէն:

Ամեն պատահար դաս մը կը սորվեցնէ մեզի: Որոշեցի *laptop*-իս աղբարկողը միայն մէկ շաբաթ յետոյ պարպել, որպէսզի կորսուածը կարենամ գտնել... նախքան ուշ ըլլալը:

Մոնթրէալ, 13 մարտ 2021

## ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՅՈՅՑՍ

*«Քու աչքիդ հազար տարին  
երկրուան պէս ակնթարթ մըն է»  
(Սաղմոս)*

1973 յունիս, նախակրթարանէն շրջանաւարտ, կեանքիս առաջին ժամացոյցը նուէր ստացայ ծնողքէս: Հոն անբիծ սէր եւ արդար հպարտութիւն էր փաթթուած՝ մասնավճարով գնուած 100 լիբանանեան ոսկի արժող «Citizen»-ի մը մէջ:

Ժամէ-ժամ, օրէ-օր, տարիէ-տարի ժամանակը ժամանակին մէջ եւ ժամանակէն դուրս շրջան ըրաւ:

### **Ժամացոյցը գնաց, ժամանակը մնաց:**

Ամեն բանի ժամանակին մէջ աքցանուած՝ ծնիլ-մեռնիլ, լալ-խնդալ, սիրել-ատել, ցրուել-հաւաքել, քանդել-կառուցել, ցանել-հնձել, վիրաւորել-բուժել, պատռել-կարել, պահել-բաշխել, կռուիլ-հաշտուիլ, լռել-խօսիլ, փնտռել-գտնել, կը քալենք՝ յաւիտենութեան ճամբորդ, երջանիկ՝ մեր կատարած գործերով, ժամանակին մէջ հետք ձգելու խաբկանքով, անցեալը՝ ներկային մէջ, ապագան՝ անցեալին հետ, անցեալ-ներկայ-ապագայ յարդգող աստուծոյ պլլուած, բարին-չարը ահեղ դատաստանի կշիռքին յանձնած, նոյն շունչով նոյն հողին երթալու, **նոյն գործին չափիչէն ճշդուած:**

Լաւալ, 27 մարտ 2021

## ՁԻԻՆԱՄԱՐԴ

*«Լուս՝ զիս եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ»*  
(Սաղմոս)

Այսօր սենեակիս արտասուածոր պատուհանէն դուրս նայեցայ եւ տեսայ դրացիիս երկու տղաներուն շինած ձիւնամարդէ ընտանիքը մէկ գիշերուան մէջ հալած էր:

Որքա՛ն անձրեւ եկած է: Վերջապէս այս տարի ալ ձմեռը չուեց:

Շաբաթ մը առաջ, երկու եղբայր, սիրազեղ ձիւնամարտէ ետք, ձիւնամարդը կերտեցին՝ փաթիլ-փաթիլ, գունտ-գունտ, իրենց մօր գուրգուրալից նայուածքին տակ:

Ի՛նչ աշխուժ, ի՛նչ եռանդ, ի՛նչ հնարք՝ ձիւնէ արձանախումբ, ձիթապտուղ աչուկներ, ստեպղին քիթիկ, բուրդէ գլխարկիկ:

Ի՛նչ աւաղում, ի՛նչ մտորում, ի՛նչ վայելք՝ **ձիւնը գնաց, մարդը մնաց:**

Երկու եղբայր եւ մայր մը՝ մաքուր կեանքը արժող, հալող ձիւնն ու գացող մարդը մոռցնող:

**Եռանդամ ընտանիքը մնաց՝ ուրախութիւնը գրկած...**

Երանի՛ այնպիսի ձիւն իջնէր ամբողջ աշխարհին վրայ, որ ճերմակ սաւանով պատէր ամեն ինչ եւ բնաւ չհալէր. ի՛նչ լաւ պիտի ըլլար եթէ կեանքի յաջողութիւններն ու ձախտորդութիւնները, լաւ ու բարին նո՛յն ծածկոցին տակ պահուէին եւ մոռցուէին:

Լաւալ, 28 մարտ 2021

## ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ՍՏԵՂՆԱՇԱՐ COMPUTER KEYBOARD

Անգլերեն տառատեսակը հայերենի փոխեցի եւ “*computer keyboard*” տպեցի, «**չըք**»-ւմք տրոգրջսգ» ելաւ:

Միայն «չըք»-ը առի եւ «չըք» «չըք» «չըք» «չըք» «չըք» «չըք» «չըք» «չըք» «չըք» շարեցի: Համակարգիչի ստեղնաշարին «չըքչըք»-ը ականջիս մէջ մնաց:

Հայերեն տառատեսակը անգլերենի փոխեցի եւ «*համակարգիչի ստեղնաշար*» տպեցի, “lgt**gig**’djcy rky=hg.g” ելաւ:

Միայն “gig”-ը առի եւ “gig” “gig” “gig” “gig” “gig” “gig” “gig” “gig” “gig” շարեցի: Համակարգիչի ստեղնաշարին “giggig”-ը ականջս ցաւցուց:

«**չըք-չըք**»ով անգլերեն, “**gig-gig**”ով հայերեն գրելս շարունակեցի...

Լաւալ, 31 մարտ 2021

## ՀԱՄԱՑԱՆՑ

Եթերային աշխարհը ծայրէ-ծայր իրար կապող ցանցին համը առինք, այլևս չենք կրնար վազ անցնիլ:

**Հաղորդակցութիւն:**

*Internet* – համացա՞նց, միջացա՞նց, ներցա՞նց, առցա՞նց, ենթացա՞նց, հակացա՞նց, փոխացա՞նց:

Այս բոլորը մեզի փոխանցող՝ անց արգել, ցանցառ, (ց)անձ, առանձ, առանձին:

Մարդագոյց առանցք, ծով նիւթերու բլշակ, դիւրահաղորդ հարթակ, ժտութեան դարանակալ ժանիք, ճօճուող կայան, մտամոլոր դեզերում, ոստայնեան սողոսկում, անխարիսխ խարսխում, պատկերներու պաստառ, տեսողական խաբկանք:

Բանտարկում, արձակում բոլորիս՝ ամեն տեղ, ակամայ մէկտեղում, ստակապ ցանցում, մշտուոր շարժաբանում...

Երախտագիտութի՞ւն, երախտամոռութի՞ւն:

**Երախտագիտութիւնը ամենէն ծանրը կը կշռէ:**

Լաւալ, 2 ապրիլ 2021

## ԳՈՅՈՒԹԻՒՆ

*«Տէր մեզի ցոյց տուր ողորմութիւնդ  
եւ փրկութիւնդ շնորհէ» (Սաղմոս)*

Ներս-դուրս, ոլորուն ցնցում:

### Ի՞նչ կ'ընեմ ես...

Գիշեր ցերեկ բոլորել, ձիւն ձմեռ գործ ընել, կեղծ գովք խեղդել, փետուր պոկել, մեծ սիրտով լեցուիլ, լալթուն գետնէն վեր թռչիլ, թռիւթոհի մէջ մտնել, կլոր փոր պատցնել, վեհերոտ մրջին տրորել, սմսեղուկ խլուրդ որոնել, պզտիկ գիւղին չորս կողմը պատիլ, գութ խնդրել, բեռ կրել, գիր ջնջել, սուր գիծ գրել, ընտիր խօսք ըսել, գեղեցիկ դէմք շինել, հոս-հոն խոնուիլ, գձուձ կորուստէն խուսիլ, թմբիրէն ելլել, լուռ նստիլ, խելքի դիմել, խորհուրդ գնել, բեմը լքել, ծխնիին ճոխնչը լսել, ձեռք բռնել, *կեթօ-ին* մէջ սեղմուիլ, մեղմիկ ճողոպրիլ, ոսկոր նետել, գր-լուխ գովել, փոթորիկ հնձել, երկինքի եւ երկիրի միջեւ շրջնալորիլ, վիզ ծռել, մորթ քերթել, վրէժ լուծել, նոր տեղ փնտռել, հին տուն գտնել, փողոտել, կթոտիլ, կիսակիտել, երկիւղիլ, ժպտիլ, ծնիլ, հետք ձգել եւ դեռ ինչե՛ր-ինչե՛ր...:

### Ո՞վ եմ ես...

Մերմի տնտղում, հապիտի ոստոստում, միտքի դրսեւորում, շունչ եւ շուք, գրիչ եւ թուր, փխրուն հող, շիթող ջուր, փռշտ օդ, մերկ փողոց, կիրթ դպիր, սուրբ ճիւղ, սուտ մեռել, տգէտ հրէշ, երկսեռ տգրուկ, խորտուբորտ ուղի, ներծծուն մնջութիւն, փուճ ստիպում, նիրհի ուսուցիչ, խեղդուող մեղու, գետ գիտութիւն, ուրոյն ջրկիր, ձեռնատու զոհ, սիրոյ ծունկ, սուլող հով, գմբէթէն հոսող լոյս, յոյլ ձկնորս, շոինչի նեղուց, ստերջ վրձին, երեւելի նետ, մուտքի շեմ, ոճիրի որոշում, տրտում ստուեր, ֆշշուն քրքիջ, մութ սեւեռում, օրէնքի թել, գուրգուրոտ ցեց, գրոհի ուղեղ, զգուելի մուկ, ոսկեզօծ կուռք, մեղքի ընկեր:

### Ո՞ր պիտի յանգիմ ես...

Հոգի, հոգեհեղում, հոգեպեղում, հոգեխեղում, հոգեկիր ուղեւոր, հոգեկից գնչու, հոգի պտղունց:

**Յետո՞յ...**

Փցուն դժոխքէն ետք՝ ոգեկոչել, օրհներգել, յիշել՝ Տէ՛ր Յիսուս, մեր օրերը շնորհքովդ լեցուր, մեզ մի հօտ եւ մի հովիւ ժողովէ, եկեղեցի ըրէ:  
Գթութիւն, փրկութիւն, բերկրութիւն:

Կողը կը մշտէ, ոտքը կը թեքի, կը շրջի՝ խոտոր թռիչքի. բոլորտիքը՝ ին՞ դձ, գոռո՞գ, վե՞հ, ի՞նչ փոյթ. կը մեկնինք ներումի թելե-րով... եւ վերջ:

Քաղաքի շէնքերու պատշգամներու բազրիքներէն սառէ սուրեր կախուած են: Դպրոցական փոխադրակառքով մանուկներ կ'անցնին: Ինքնաշարժներու ծուխը սեւ երիզներ կը ցանէ ձիւնին վրայ:

**Կեանքը կ'եռայ տաք կաթսայի պէս...:**

Մոնթրէալ, 3 ապրիլ 2021

## ԿԵԱՆՔԸ՝ ԿԱՏԱՐԿ

Հիւանդանոցի սենեակիս մենութեան մէջ, կեանքին կը նայէի *սերով-ին թրփ-թրփ-թրփ* կաթկթումով: Բան չէր լսուեր: «Մա անիծեալ շիշը մինչեւ առտու պիտի պարպուի հարկաւ», կը փիլիսոփայէի, երբ արծուաթռիչ փոթորիկ ընկերս ներս խուժեց եւ թելը փրթաւ:

«Լաւ որ գացինք աչքի տոքթոր-ին: **Գիտե՞ս ինչ լաւ բան է երկու տեսնելը:** Հիմա եթէ գրպանդ հազար տոլար ունիս՝ կը կարծես, որ երկու հազար ունիս...» նախադասութիւնները ետեւ-ետեւի թափեց վրաս եւ քրքջաց. զիս ալ խնդացուց, եւ մտահոգութիւններս փարատեց:

*Սերով*-ը ուզէ թող պարպուի, ուզէ թող չպարպուի. բայց արդեօք պահարանին մէջ կախուած տաբատիս գրպանին մէջ մէկ միլիոն լիբանանեան ոսկի կայ, թէ երկու միլիոն: Ինչո՞ւ պիտի գիտնամ: Կարելորդ առողջութիւնս է:

*Սերով*-ի կենսական կաթիլները կը շարունակեն շրջագայիլ...

Մէկ ժամէն ընկերս մեկնեցաւ: Ստուգեցի. տաբատիս գրպանին մէջ ունիմ հինգ հարիւր հազար լիբանանեան ոսկի եւ հարիւր տոլար. Մինչ առողջութիւնս անգին է:

**Հաշիւիս մէջ երկու տեսնել չկայ...** մէկ մէկ ալ երկու կ'ընէ:

Հիմա գլխաւոր մտահոգութիւնը գլուխ ցցեց:

Բժիշկ-բժիշկուհիներ յաջորդաբար եկան, եւ տեսակաւոր քննութիւններ կատարելէ ետք՝ պարզեցին, թէ գլուխիս մէջ աւելորդ ջուր կուտակուած է եւ այդ ջուրը պէտք է դեղերով ցամքեցնեն. (ուրեմն *սերով*-ին *թրփ-թրփ-թրփ* կաթկթումին ձայնը գլուխի՞ս մէջ կը լսէի ես):

Անոնք նախ վախցած էին, թէ աւելի լուրջ բարդութիւններ կրնան յառաջանալ: Յամենայնդէպս ընկերոջս կատակը լուրջի վերածուեցաւ: Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով ամեն օր երեք տեսակ դեղ կ'առնեմ եւ խորապէս կ'անդրադառնամ, թէ մարդու մը կեանքը շատ բարակ թելէ մը կախուած է, եւ կեանքին հետ կատակ չըլլար՝ **նոյնիսկ եթէ կեանքը երկու տեսնես եւ կամ ապրելիք երկու կեանք ունենաս. կեանքի թելին ճախարակը Աստուծոյ ձեռքին մէջն է:** Մենք միայն կրնանք աղօթել, որ այդ ճախարակը դառնայ «*եղիցին կամք քո*» աղօթքին կշռոյթով:

Շնորհակալութիւն բոլոր անոնց, որ աղօթեցին եւ կը շարունակեն աղօթել բոլոր հիւանդներուն համար...

## ԿՈՒ ԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ

*Միրասուն նորածինի մը*

Երեք օր առաջ այցելեցի ընկերոջս նորածին թոռնիկին: Ընտանիքին առջինեկն է: Ան երեք օր առաջ աշխարհ մտած էր եւ հիմա մշիկ-մշիկ կը քնանար. լուռ իսկ չունէր, թէ աշխարհին մէջ ի՛նչ կ'անցներ-կը դառնար: Բախտաւոր մանուկ, երանի՛ միշտ այսպէս մնաս, երանի՛ բոլորս այսպէս ձգեն:

Յանկարծ իրարանցում մը. մանուկը աչքը կը թարթէ. մաման տեղէն կը ցատկէ՝ **«ամա՛ն, արթնցաւ. ի՞նչ ունի»**. մանուկը աջէն ձախ կը դառնայ. մեծ պապան կը վազէ՝ **«վրան գոցեցէք. չմսի»**. մանուկը կը յօրանջէ. պապան կը սաստէ՝ **«ըսի՛ ձեզի. լաւ չնայեցաք. պաղ առաւ»**. մանուկը կու լայ. մեծ մաման կը դժգոհի՝ **«հա՛, դեռ ըսէք՝ ես բան չեմ գիտեր. դո՛ւք բերիք, դո՛ւք մեծցուցիք երեք զաւակներս. ըսի՛՝ վրան շատ մի՛ գոցէք, լաւ չէ»**. եւ դեռ՝ մօրեղբայրը կայ, մօրաքոյրը կայ, միւս մեծ մաման կայ, միւս մեծ պապան կայ, մեծ-մեծ մամաները կան, դրացիները կան, խնամիները կան, կան ու կան... այս բոլորը սիրոյ ծրար. իսկ ինքը՝ ձախէն աջ կը դառնայ ու ի՛նչ անուշ կը քնանայ:

Աշխարհի վրայ ամեն օր քանի՛-քանի՛ մանուկներ այսպէս կու գան ու կ'երթան:

Ինչո՞ւ: Աստուած գիտէ: Ի՛նչ լաւ, որ Աստուած կայ:

Կը ժպտայ...

Անթիլիաս, 2 յունուար 2022

## ՓՇՐՈՒԱԾ ԾՆՈՒՆԴԸ

*«Զի Աստուածն յաւիտենական յերկրի երեւեցաւ,  
եւ ընդ մարդկան շրջեցաւ» (Պատարագամատոյց)*

Հրեշտակներու եւ մարդոց համբոյրի դրոշմով՝ ցօղի նման երկինքէն երկիր իջաւ, մանանայի նման հոգիներու սափորները յորդեցուց, նշխարի նման բաշխուեցաւ եւ առատացաւ:

Ծնաւ նոր արքան նաեւ Լիբանանի մայրիներու աւերեալ պուրակին մէջ, առանց երգի՝ լացով, առանց յոյսի՝ մութին մէջ, առանց հացի՝ սէւ երագով, միայն իր սիրող մօր թելերուն եւ գուրգորոտ հօր նայլածքին յանձնուած, Բեթղեհէմի մսուրի դրուագին կրկնումով՝ արտաքսուած, անտեսուած, լքուած, մինակ, աչքը երկինք սեւեռած — *«Տէ՛ր լոյս իմ եւ կեանք իմ»:*

Մանուկ Յիսուս քալեց Լիբանանի մէջ ամեն տեղ եւ մտաւ ամեն տուն. ի՛նչ ճոխութիւն... չհաւատաց. ի՛նչ աղքատութիւն... չըմբռնեց. նոյն մէկ տղարը երեսուն հազար լիբանանեան ոսկիով փոխանակող եւ ծախսող լիբանանցիներն ասոնք. *«ես եկայ ասոնք բոլորը փրկելու համար»* եզրակացուց, եւ երկինք վերադարձաւ... օր մը նորէն գալու վճռական խոստումով:

Անթիլիաս, 6 յունուար 2022

## ՄԵՌԵԼՆԵՐԷՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԱՅՑ

*«Որ յանէից ստեղծող գոյից» (Շաբակյան)*

Քրիստոս պատարագեալ...: Երիտասարդութեան առաջին սանդղիսամատին արձագանգն է, արեղային *«Խաղաղութիւն ամենեցուն»*-ով ցայտուն:

*«Տէր թողութիւն շնորհէ քու այն ննջեցեալ ծառաներուդ, որոնք անարատ ձեռքովդ ստեղծեցիր»:*

Միս, Անթիլիաս, Պէյրութ. Սահակ կաթողիկոսի վառած նոյն կանթեղն է, որ վերին Երուսաղէմի շէշտերով, հոգեղէն դասերու թելաքախումներով՝ մայրավանքէն Պուրճ Համուտի գերեզմանատուն կը բերէ զիս. խունկ, մոմ, աղօթք, հոգւոց — կեանք:

Ծանօթ եւ անծանօթ անուններ իրենց հանգիստ քունին մէջ՝ ցկատարածն աշխարհի Սուրբ Հոգիին մխիթարութեան յանձնած, կը մտնեն աղբերով ցանցնուած մեր նախկին թաղը, ուր՝ խեղանդամ պուպրիկներ, ֆսսած պալոններ, կոտորտած խաղալիքներ, անիւները փրթած *օթօ*ներ, օդին մէջ շարժող աղքատ մանուկներու թափօր մը գլխաւորած՝ պատռտած հագուստներով մանուկն Յիսուս *«հոգւոցն հանգուցելոց արա հանգիստ եւ ողորմութիւն»* կ'աղօթէ եւ *«մեղաւորացն...»*՝ կը կարկամի, չի՛ կրնար շարունակել *«շնորհեա զթողութիւն յանցանաց»*: Մեղքի թողութի՛ւն — շռայլութեա՛ն, նենգութեա՛ն, հայրենադաւութեա՛ն, սուտի՛, գողութեա՛ն, ագահութեա՛ն, անօրէնութեա՛ն — առանց զոջումի՛, խոստովանութեա՛ն, ապաշխարութեա՛ն, հատուցումի՛:

Ո՛չ: Մեռելներն անգամ փոսերուն մէջ հոլի նման անդադար կը ֆոռան:

Մեղքի ցեխի լեռնակոյտէն բարի յիշատակը պիտի մնայ:

Ապա, ժամանակներու աւարտին, **Երանի մեզի եթէ մեր անունը Աստուծոյ գրատախտակին վրայ անջնջելիօրէն գրուի:**

Անթիլիաս, 7 յունուար 2022

## ՈՒՐԱԽՈՒԹԻՆՍ

«Իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ»  
(Յիսուս)

Մարդը՝ կեանքին ծայրը հասած, չորցած պարտէզին մէջ, ամառ-  
ւան հեղձուցիչ շոգին, թռչուններու դայլալին տակ, շլմորուն, մեկուսի կը  
մտորէ...

Անցա՞նք քորոնայի –կ'ըսեն/կ'ըսես– այս համաշխարհայնացած  
հանգրուանը: Քառս: Պատուաստ: Բնականո՞ն կեանքի վեր-ա-դարձ:  
Վազք: Հեւք:

Նախաքորոնա: Յետքորոնա: (Նք – Յք)

Ի՞նչ մնաց նախա-էն յետ-ին:

Սէր՝ կոտորակուած սիրտերու մէջէն հոսող անսպառ սէր. հեռու,  
հեռացած, օր մը դարձեալ միանալու խոստումով կապուած սիրտերու  
սէր՝ ուրախութեամբ վերա-միանալու, եթէ մահը աւելի կանուխ չհասնի  
սիրոյ պատրոյգը փչելու:

Սորվեցանք դասը մահուան կամ կեանքին պատկանելու, յաղթա-  
հարելու, ոչնչանալու սարսափը կամ տօնելու կեանքի խնճոյքը առ  
յաւէտ:

Սրբութեան հայելիին կը նայի: Ի՞նչ երկնաբերձ խորհուրդ է:  
Թռչունները կը լռեն:

Ստեղծագործութեան եօթներորդ օրն է:

Ամեն ինչ կ'աւարտի:

And It Was Good, And It Was God.

Յիսուս պարտէզ կը մտնէ:

Կեանքը կը վեր-ա-ծաղկի:

Տիրութիւնն ու ուրախութիւնը անպայման պիտի թակեն բոլորիս  
դուռը:

**Ուրախ Աստուած, մարդոց սիրտերուն մէջ կը թագաւորէ:**

Մարդոց վերա-ուրախութիւնը կատարեալ կ'ըլլայ:

Անթիլիաս, 16 յունուար 2022

## ԼՈՒՍԱԽՈՐԷ՝

«Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ»  
(Աւետարան)

Կէս գիշերին կ'արթննայ:

Անկողինին սեղանիկին վրայ եղող լոյսը կ'ուզէ վառել: Թըք-թըք,  
թըք-թըք: Ձայնը կայ, լոյսը չկայ:

Է՛հ, Լիբանան է: Կ'երեւի ելեքտրականութիւնը անջատած են:

Աչքերը կը շփէ: Ո՛չ: Պատուհանէն լոյս կը մտնէ: Ուրեմն լոյս կայ:

Կրնայ ներքին խանգարում ըլլալ: Չի՛ կրնար քնանալ: Պէտք է կար-  
դայ:

Ննջարանին լոյսը կը վառէ: Լոյս կայ: Կը սկսի լուսամփոփը  
քրքրել: Լուսամփոփին լոյսը կը ստուգէ: Անպայման այրած է: Ուրիշ բան  
չի՛ կրնար ըլլալ:

Լուսամփոփը ետ սեղանիկին վրայ կը դնէ: Ննջարանին լոյսը կը  
մարէ: Նորէն անկողին կը մտնէ:

Բժիշկը արգիլած է իրեն ննջարանին լոյսով գիրք կարդալ:

Երբ կարդալ ուզես՝ լոյս չըլլար: Երբ լոյս ըլլայ՝ կարդալ չես ուզեր:  
Երբ կանուխ արթննաս՝ լուսամփոփիդ լոյսը կ'այրի: Երբ լուսամփոփիդ  
լոյսը չէ այրած՝ կարդալը միտքդ չի՛ գար:

Եւ դեռ ինչէ՛ր-ինչէ՛ր-ինչէ՛ր չեն ձգեր որ քնանայ...

Բայց **լոյսը կը ճեղքէ խաւարը եւ կը ծագի՝** աշխարհի վրայ, մար-դոց  
միտքերուն մէջ, անմեղ հոգիներուն մէջ, սիրող սիրտերուն մէջ:

Տունէն դուրս կ'ելլէ՝ լուսամփոփին համար նոր լամբ գնելու հա-  
մար շուկայ կ'երթայ: Եւ նոր օր կ'ըլլայ...

Անթիլիաս, 19 յունուար 2022

## ԱՊՐՈՂ ՆԽՇԱՐ

*«Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր»*  
(Պատարագամատոյց)

Պսաղուն ծովուն դիմաց, երկինքի եւ երկիրի համբոյրով օծուն այս արեւագալին, ինծի կ'այցելեն *«Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ»* շարականող Մաշտոցը մեղաբարձ, Վանայ ծովուն ալիքներուն բեկբեկումով իր Մատեանը երկնած Հսկողն մշտարթուն՝ *«Մեղա՛յ երախտիքդ մոռնալուս համար, նորէ՛ն մեղայ»* հծծիւնով, ամեն օր իր մաքրամաքուր հոգիի տապանակէն առ Աստուած *«Դրացիիս գորգ մը տուր, ես ալ երթամ ծայրը նստիմ»* խնկող հօրենական մեծ մայրս լուսասփիւռ:

Շարունակ բաշխուող երեք թարմ նշխար՝ ծովուն ալիքներուն նման յարաշարժ, կենսատու, անսպառ:

Տասը օր է առանձին եմ:

Դարերուն անիւր կը շրջադարձեմ եւ կեանքի հեւքէն առած ակամայ դադարիս մէջ **շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ՝ այս քաղցրահամ նշխարին ճաշակումը մեղաւորիս շնորհելուն համար:**

Լառնագա, 16 փետրուար 2022

## ՄԱՀԷՆ ԿԵԱՆՔ

*«Աչք քո հովանի լիցի ի վերայ իս  
ի տուէ եւ ի գիշերի» (Ս. Ներսէս Շնորհալի)*

Մութին մէջ նաւին լոյսը ինծի աչք կը քթթէ եւ ուղին կը շարունակէ:  
Արեւը ծագած է արդէն եւ նաւը չկայ:

Ան քաղաք հանգրուանած է:

Հասած է իր նաւահանգիստը:

Ճամբորդներ տուները հասած են. ողջագործումով դիմաւորուած:

Կեանքը՝ կեանքէ՞ն մահ, թէ՞ մահէն կեանք երթալ է: Առեղծուած...  
յիմար հարցո՞ւմ... խորին խորիո՞ւրդ...:

Ժամանակաւորին ու անցաւորին մէջ անժամանակն ու անանցը  
բռնելու ճիգ մը՝ մանանեխի հատիկին չափ հաւատքով կը զինէ մեզ,  
ապագայի յոյսի եւ բարօր յաւիտենական կեանքի աստուածամերձ ներ-  
կայութեան ձգտումով, երբ մարդու որդիներս Աստուծոյ թելերուն տակ  
կը պատսպարուինք՝ մինչեւ կեանքի փոթորիկը մարի, նոր երգը փթթի  
մեր շրթներուն վրայ եւ որդեգրութեան շուրջառով պարուրուինք:

Կորուստի խաւարին մէջ աստուածատեսութեան լոյսը կը ծագի:

Կը հնչէ նոր Երուսաղէմը ժողովելու տէրունի հրաւերը՝ *«Քանի՜  
անգամ ուզեցի քեզ հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ  
թելերուն տակ, բայց դուն չուզեցիր...»*:

Կուգեմ, Տէ՛ր, հաւաքէ՛, զիս, մեզ. յաւիտեան քովդ պահէ՛:

Լառնագա, 17 փետրուար 2022

## ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՁԵՌՔՍԵՂՄՈՒՄ

Կիպրոսին

Կղզին անարդարաբար հատող գիծին մօտ, մզկիթներու մինարե-  
ներուն եւ եկեղեցիներու զանգակատուններուն դարաւոր դրացնութեան  
հիւսուած՝ կը հնչէ ռուս երիտասադ դաշնակահարին մատներով բանող  
սիրոյ, խաղաղութեան, արդարութեան եւ համակեցութեան հրաւերը,  
մինչ Կիպրոսէն քարընկէց մը անդին գտնուող տակաւին յամեցող  
լիբանանեան անհեթեթ տազնապը եւ նոր փթթող ուքրանական-  
ռուսական պատերազմը կողքիս բազմած միջազգային ընկերութեան  
դեսպաններուն խուլ ականջներուն թանձր պատերուն կը զարնուի եւ  
քաղաքավարական ծափերու տարափով կ'արձագանգէ հանդիսասրա-  
հին մէջ, երբ լուրերը կը ծանուցեն՝ «Ուքրանիոյ մէջ հազարաւոր ան-  
մեղներ յումպէտս կը զոհուին...» — միայն Ուքրանիոյ մէջ...:

Երաժշտութիւնը կը գլգլայ, դաշնակահարին մատնեմատի ամուս-  
նութեան մատանին իր ընտանիքի անդամներուն ներկայութիւնը կը  
ցոլացնէ, երբ կին ու զաւակներ տունին հօր բարի լուրերով Լոնտոն  
վերադարձին կը սպասեն, մինչ այլ տեղ իր ազգակիցները, իմ ազգա-  
կիցներս, Աստուծոյ պատկերը կրող համայն մարդկութեան ազգա-  
կիցները իրար կը յօշոտեն՝ քիչ մը ամեն տեղ ... զենքով, դրամով, «պա-  
տիւ»-ով, գրիչով, ժպիտով...

Երեկոն կազմակերպած ընկերս կը փսփսայ ականջիս. **«Արդեօք  
21-րդ քաղաքակիրթ դարուն մէջ կ'ապրինք»**։

Նիկոսիա, 2 մարտ 2022

## ՄՐԲԱՐԱՆ

*«Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ  
առաջիք, Տէ՛ր. համբարձումն ձեռաց իմոց,  
պատարագ երեկոյի» (Սաղմոս)*

Արեւամարը հրաւեր է սրբարանի երեկոյեան ժամերգութեան:

Հաւատացեալներ խունկ կը ծխեն, աղօթք կը մրմնջան, բանաւոր  
պատարագ կը մատուցեն — ձեռքերու հետ սիրտեր վեր, առ Աստուած  
կը բարձրանան:

Խնկանուէր մաղթանքներ կ'այրեն մեղքերը, կը սրբեն խիղճերը, կը  
մաքրեն հոգիները — քուլայ-քուլայ երկինք կ'ելլեն պար բռնած երիզ-  
ներ:

Մոմեր շիթ-շիթ կը հալին, արցունք-արցունք կը ժպտին — կը  
բորբոքին, կը հիւծին, կը թարթեն. երկինքի ճամբան կը հոգեւոսեն:

Նոր ուխտի զաւակներ՝ ոսկեայ սեղանին փոխան իրենց համակ  
անձերը ուխտի տապանակի վերածած կնդրուկ կը բուրեն — **կը մեռնին  
անօրէնութիւնները, կը ծնին առաքիւնութիւնները:**

Լաւալ, 1 հոկտեմբեր 2022

## ՏԱՐԵՓԱԿ

Կա՛մ, ուրեմն՝ կա՛մ:  
Չկամ, ուրեմն՝ չկա՛մ:  
Այս աշխարհին կամ ու չկամը հոս պիտի մնայ:  
Կամ կամ չկամ՝ յաւիտենութեան մէջ ԿԱ՛Մ:

Կա՛նք, բոլորս ԿԱ՛ՆՔ:  
Կա՛նք՝ հոս կեանքով:  
Կա՛նք հոն՝ երանաւետ անանց կեանքին համար...:

Ա՛յս ըլլալ-չըլլալով կանցնի մեր կեանքը: Կա՛նք կամ չկա՛նք՝  
որո՞ւն հոգը, քանի կա՛յ կեանքը հոս եւ հոն՝ ինձմով, քեզմով, բոլորով,  
երէկ, այսօր եւ վաղը...:  
Ուրեմն՝ կա՛նք:

Կա՛մ, կա՛նք եւ կեա՛նք: Եռոտանի խորհո՞ւրդ, տարեվերջի բար-  
բանջա՞նք, խոտորեալ մտորո՞ւմ, ընտրեալ ժողովո՞ւրդ, բեկեալ բեկոր-  
նե՞ր, լաց ու ծիծա՞ղ, մագլցում ու անկո՞ւմ, մեղք ու ներո՞ւմ, եւ դեռ  
ինչե՛ր-ինչե՛ր...:

Ո՞վ կրնայ, թող սահմանէ:

Ես մէկ բան գիտեմ եւ մի՛շտ պիտի ըսեմ. «Մարդկօրէն կա՛մ ու  
կա՛նք՝ **կենսասէր**»:

Անթիլիաս, 31 դեկտեմբեր 2022

## ԺԱՄԱՑՈՅՑԸ

*«Ժահահոտ եղէ ժամանակս բազումս»*  
(Ս. Ներսէս Շնորհալի)

Պատէն կախուած, սլաքները տարիներէ ի վեր անշարժացած, ժամանակը հաշուելէն դադրած ժամացոյցը՝ ննջարանիս մէջն է հինգ տարիէ ի վեր...

Ծնողքիս տունէն բերած միակ գանձս է ան, իրենց նաքօտէն մինչեւ գերեզման ժամը չափած. իսկ հիմա դադրած առ յաւէտ՝ զայն լարողներուն պէս:

Երջանիկ օրուան մը նուէրն էր ան, սիրելիէ մը տրուած՝ կեանքնուէրին խորհուրդով պարուրուած:

Ո՞ր է, ամեն օր իրիկուան ժամը ութին զայն լարող Բանալին: Իրենց հէ՞տ տարին:

Բանալին դարձնող ձեռքերուն ինչե՛ր պիտի հարցնեմ օր մը. մինչ այդ լուռ է ժամացոյցը, իսկ ժամանակը կը հոսի:

**Ժամանակը պիտի հաշուէ կեանքին տռամը՝** նոյնիսկ առանց ձեզի, քեզի ու ինծի, ցկատարածն աշխարհի....:

Լաւալ, 11 մայիս 2023

## ՄԱՔՈՒՐ ԴՐԱՄԸ

*«Աստուած իմ, դուն հոգա եւ պատրաստե  
հոգիիս եւ մարմինիս բոլոր պէտքերը»  
(Ս. Ներսէս Շնորհալի)*

Անձուկ օրերու մորմոքով առլցուն՝ գետնամած կը սրբէ ապա-  
րանքին գետինը, կարեկցանքի խայթող նայուածքներուն տակ:

Չորս զաւակ՝ այրի կնոջ ձեռքին կը սեւեռեն իրենց աչքերը, ամեն  
իրիկուան տունդարձի ժամերուն:

Համեստ է աղքատ ընտանիքին սեղանը՝ *«Մամա՛, մամա՛»*, ջերմ  
ճռողիւնի արձագանգով:

Առատաձեռն հիւրեր երբեմն-երբեմն մի քանի տոլար կը դնեն  
մայրիկին գոգնոցին գրպանը... պարբերաբար միսի եւ հաւի համը  
հասցնելու ձագուկներուն քիմքին:

Աչքերը գետին խոնարհած, ձեռքերը վեր պարզած՝ *«Տէ՛ր, այս  
անգամ ալ հասար մեզի, փա՛նքդ շատ»*, կը մրմնջէ մաման, հոգեհա-  
տորներուն աճող հասակը պատկերելով՝ վաղուան անոնց նարօտա-  
կապ օճախին երազը գրկելով...

Մոնթրէալ, 19 սեպտեմբեր 2023

## ՎԵՐՋԻՆ ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋԱԻ

*«Կեանքը թատրոն է...»:*

Յաճախ լսած էր այս խօսքը՝ տունէն դպրոց եւ ամբողջ կեանքին ընթացքին: Չէր գիտցած. ինք ի՞նչ դեր ունի թատրոնին մէջ — բեմադրի՞չ է, դերուստ՞յց է, յուշարա՞ր է, դերասա՞ն է, հանդիսատե՞ս է: Թերեւս մէկն ու միւսը մէջ ընդ մէջ. արդեօք բոլո՞րը միաժամանակ:

Ամբողջ կեանքը խաղցաւ ի՛ր դերը աշխարհի բեմին վրայ կամ բազմեցաւ թատերասրահին մէջ իրեն տրուած աթոռին վրայ:

Հիմա մահուան անկողինին մէջն է: Փաթիլ-փաթիլ, բամպակ-բամպակ, գնդիկ-գնդիկ ձիւն կը տեղայ դուրսը եւ ներսը: Դողերու մէջ, ինքզինքին հետ կը խօսի եւ վերջին վճռական հարցը կու տայ. *«Խա՛ղդ խաղցար: Ողբերգու եւ կատակաբան եղար: Լացուցիր եւ խնդացուցիր: Ծափահարուեցար: Շպարուեցար: Փքեցար»:*

Հիմա... *«Յիշէ՛, փառքերդ պիտի ցնդին. հոգիդ պիտի տաս Արարիչիդ»:*

*«Վերջին վարագոյրը իջաւ մարդոց դիմաց խաղցած խաղիդ վրայ: Առանձին ես այլեւս: Բեմդ սնարդ է միայն: Այլ դերասան եւ հանդիսատես պիտի չըլլայ բնաւ: Ի՞նչ կը թողուս ետիդ»:*

Փառք, դիրք, հարստութիւն ոչինչ են այլեւս. կեանքի ամբողջական վայելումը խաբկանք է միայն. անկատարելութեան գրաւական:

Իսկապէ՛ս կեանքը թատրոն է: Հարցումը առկախ կը մնայ:

Այս բոլորէն ետք, կարելորը երկինքի բեմին վրայ բացուող նոր վարագոյրն է...:

Հոռմ, 19 յունուար 2024

## ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Անբաւ պահանջով լեցուեցաւ ինքնաբաւ ու ինքնամփոփ կեանքը, երբ տունին մենութենէն դուրս վազեց եւ *տուանթաուն*-ի շքեղութեան բախեցաւ:

*«Երանի՛ այս բարձր շէնքերուն փենթհուազ-ներէն մին իմս ըլլար...»* փափաքը տաղեց իր սիրտը:

Հանգուցեալ մօրը ձայնը խժժաց ականջներուն մէջ. *«Ինքզի՛նքդ եղի՛ր, տղաս»*: Մինչեւ հիմա գոհ էր իր եղածով. ո՛չ նախանձ, ո՛չ մսխում, ո՛չ ցանկութիւն:

*«Ինքզի՛նքս եղա՛յ»*, հարց տուաւ:

Տուն դարձին նամակատուփին մէջ ամսական վարձակալութեան եօթը հարիւր տոլարի վճարագիրը գտաւ: *«Ինչպէ՞ս վճարել»*. մտալլկումով պաշարուեցաւ:

*«Չեմ գիտեր ի՛նչ եղայ»*, ափսոսաց:

Գնաց դրացիին քով սուրճ խմելու: Ան բջիջային հեռախօսին *էփփ*-ով ստուգեց Հայկին մէկ օր առաջ գնած *լօթերի*-ի տոմար: *«Երկու տոլար: Աստուած տայ որ գալ անգամ երկու միլիոն շահիս...»*, ըսաւ ան:

Մաղթա՞նք, հեգնա՞նք, խաբկա՞նք, սին յուսադրո՞ւմ:

Եօթը հարիւր տոլարը որմէ՞ պարտք առնել:

Երկնաքերը փուլ եկաւ գլխուն վրայ:

**Մեր կեանքը վիճակահանութեան տոմսէն շատ աւելի՛ն կ'արժէ...**

Լաւալ, 24 դեկտեմբեր 2024

## ՓԱՌԱՏՐՈՒԹԻՒՆ

*«Փառաւորեցի ամենասուրբ անուն ք» (Ժամագիրք)*

Լայնածաւալ աշխարհի չորս ծագերուն Աստուծոյ փառքը կը պատմուի: Ամբողջ արարչութիւնը կը ցնծայ քաղցրաձայն սաղմոսումով:

Երկինք եւ երկիր կը հրճուին, բանական արարածներս իրաւունքի եւ արդարութեան գովքը կ'երգենք:

Աղօթք, մաղթանք, սաղմոս, շարական՝ երախտագիտութեան ուստայն կը հիւսեն, Արարիչն ու արարածները պարակից կընեն: Մարդիկ կը խօսին, Աստուած կը լսէ:

Բաւիղներէն եւ քառուղիներէն արդար-մեղաւոր թափօր կը կազմեն, ամենասուրբ անունը կը փառաւորեն:

Արիւնը կ'եռայ: Կեանքը կը թրթռայ: Աստուած մանուկներուն օրրանը կ'օրօրէ: ***«Մանուկներուն է Երկինքի արքայութիւնը»*** կը հնչէ վերէն...:

Լաւալ, 26 դեկտեմբեր 2024

## ԱՌԻԹ ՄԸ ԵՒՍ ՏՈՒԷՔ

Բնաւ դիրին չէ ճիշդ բառերը գտնել մեր մտածումներն ու զգացումները ամենահարազատօրէն արտայայտելու համար:

Ժամանակին ըսուած է. «Խօսքը կը թռչի, գիրը կը մնայ»:

Այսօր կ'ըսուի. «Ոչինչ կը ջնջուի, ամեն բան կը մնայ»,– ձայնով, գիրով, նկարով,– համակարգիչի դարակներուն մէջ ննջած:

Անցեալը գնաց: Ապագան պիտի գայ: Ներկան վայելենք խօսքերու մշտական մրճահարումով:

Արդեօք մեր հասկցած ձեւով կ'ըմբռնե՞նք մեզ:

Խօսքը ծանրակշիռ է պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցողին համար:

Խօսելէն ետք, անվստահութեան մառախուղը կը փարատենք, երբ խնդրենք. **«Առիթ մը եւս տուէք ինքնասրբագրութեան, ինքնախօսքի, նո՛ր խօսքի»:**

Խօսքերու ժխտրին մէջ, հեւասպառ կեանքի վազքէն պարտասած, միթէ շա՞տ է գէթ առիթ մը եւս ուզել որպէս բացուող տարուան ինքնանուէր:

Անթիլիաս, 2 յունուար 2025

## ԱՆՃԱՆԱԶԵԼԻՆ

*«Աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն  
աշխարհը զինք չճանչցաւ» (Աւետարան)*

ԶԱստուած գտնելու ճիգիս մէջ, աստուածաշնչական Նահապետին հետ կը կրկնեմ. «Իրապէս Տէրը այստեղ է, բայց ես չէի գիտեր»:

Քրիստոսի հետեւորդ առաքելին նման կը ցնցուիմ տէրունի սաստէն. «Այսքան ատեն ձեզի հետ եմ եւ տակաւին չճանչցա՞ր զիս»:

Բնութեան գիրկն եմ: Լեռ ու ձոր կը կտրեմ. կը հիանամ. կը քարանամ. ստեղծագործութեան հրաշալիքները կը նկարեմ-կը ջնջեմ ներաշխարհիս մէջ:

Թռչուններու դայլայլին հետ կը լսեմ տիրական քաղցր ձայնը. «Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի»:

Կը ճանչնամ. Արարի՛չն է. սիրտս իր սիրովը կը լեցնէ:

Ծաղիկ մը կը քաղեմ, կը հոտոտամ. լուսանկարչական մեքենայի պայուսակիս մէջ կը դնեմ:

Դէպի տուն կը քալեմ: Ձայնը առաւել ուժգնութեամբ կ'արձագանգէ հոգիիս ականջին մէջ. «Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ»:

Նարեկի աստուածամերձ վանականը կը յուշէ. «Սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ ի բարձունս»:

**Ճանչցած եմ Անճանաչելին: Ան անմոռանալի է այլեւս...:**

Թեթեւոտն կ'ընթանամ:

Պիքֆայա, 10 մարտ 2025

## ԱՍ ԱԼ ԱՅՍՊԷՍ ՎԵՐՁԱՑԱԻ...

Ամեն հինգշաբթի, լարուած ժամացոյցի պէս ճշդապահ, մեծ մայրիկը իրենց տունի աղբարկղը դուրս կը հանէր եւ պարտեզին անկիւնը կը դնէր: Ապա, ան ճակատամարտ մը յաղթած զօրավարին նման տուն կը վերադառնար եւ այլ գործերու կը լծուէր:

Երեկոյեան, երբ աղբ հաւաքող բեռնատարը կ'անցնէր եւ աղբարկղերը կը դատարկէր, մեծ մայրիկը իրենց տունին եւ երկու դրկից տուններուն աղբարկղերը իրենց տեղը կը տեղաւորէր:

Երբ հարց կու տային. *«Ինչո՞ւ դրացիներուն աղբարկղերն ալ իրենց տեղը կը դնես»*, լակոնական ոճով ու գոհունակ սիրտով կը պատասխանէր. *«Մե՛ղք են, գործէն տունդարձին մէկ հոգ պակաս իրենց»*:

Այսպէս ամբո՛ղջ տարիներ...:

Երեկ մեծ մայրիկը իրենց տունի աղբարկղը դուրս չհանեց. իրենց տունին եւ երկու դրկից տուններուն աղբարկղերը ան իրենց տեղը չտեղաւորեց: Ուժասպառ էր. անկողինէն լուսաւոր փողոցը կը դիտէր, երբ գործէն տուն եկած հարսը միայն իրենց աղբարկղը իր տեղը կը դնէր:

Մի քանի շաբաթ ետք, **մեծ մայրիկին դագաղը տունէն դուրս հանեցին...:**

Աղբերը նորէն ամեն շաբաթ դիզուեցան:

Ամեն տանտէր, ամեն հինգշաբթի իր աղբարկղը դուրս հանեցնէրս բերաւ:

Լաւալ, 21 ապրիլ 2025

## ԲԱՆԱԻՈՐ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ

*«Զօրհներգությունս բանաւոր պատարագ  
քեզ վեր առաքեմք» (Շարական)*

Շարական եւ աղօթք երկնատուր շնորհ ցօղելով կ'աղբերանան եկեղեցին լեցուցած ուխտաւորներուն շրթներէն՝ *«զՏէր աղաչեսցուք»* մաղթանքով:

Պտղիին հետ սերը եւս կը պտղաբերի աստուածային պատուիրաններուն լոյսը հեղելով եւ հաւատացեալներու հոգիներուն ջահը մեծապայծառօրէն վառելով:

Երեւելի եւ աներեւոյթ թշնամին կը չքանայ, սեւ իրիկունը կ'առաւօտի, փորձութիւնը կը փարատի, որոգայթը կը ննջէ, արդարութիւնը կը տիրէ:

Մարդասիրութեան գուրը կը ծագի, հոգին կ'արթննայ, սիրտը կը զգուէ, միտքը կը սաւառնի, վարքը կ'ուղղուի, հաւատքը կը փրփրի, գործը կը բարերարէ:

Աստուծոյ ամենատես աչքը արդարներուն վրայ կը բացուի եւ ականջը անոնց աղօթքներով կը լեցուի:

**Տէ՛րը մեզ կը պահպանէ մինչեւ ժամանակներուն լրումը եւ ապա...**

Լաւալ, 2 յուլիս 2025

## ՏԷՐ, ԽՈՒՆԿ ԵՒ ՄՈՍ ԽՈՐԱՆԻԴ

Աստուծոյ խոնարհած ականջին ի լուր, երկու մեղրամոմի թարթումով, հոգեբուխ աղօթքը կնդրուկի ոլորապտոյտ երիզներով երկինք կելլէ:

Ստաշիւր կը բուրէ, քուլայ-քուլայ կը պարէ, ծուէն-ծուէն կը շրջի, մեղքերը կը մաքրէ, խնկանուէր մաղթանքները կը սփռէ:

Մոմը շիթ-շիթ կը հալի, արցունք-արցունք կառկայծի, կը ժպտի, կը հիւծի, կը բորբոքի, կը լուսաստղէ, կը հոգելուսէ:

Ձայնը կերգէ, նայուածքը կը շշմի, ականջը կը սրի, սիրտը կը սիրէ, ձեռքը կերկարի, ոտքը կը վազէ:

Խունկի ամպին եւ մոմերու լուսացայթին մէջ անօրէնութիւնները կ'այրին, առաքինութիւնները կը ծնին, Արարիչ եւ արարածներ կողջագործուին:

Ամպերուն մէջէն պատուհան մը կը բացուի: Աստուած վար կը նայի եւ օրհնելով կը պատուիրէ. *«Հաւատքով խարսխուեցէ՛ք, յոյսով ոտքի կանգնեցէ՛ք, սիրով յարատեւեցէ՛ք: Ո՛րհտդ կատար, հաւատացեալ...»*:

Լաւալ, 30 յուլիս 2025

ԲԺՇԿԵԱ ԶՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆՍ

«Ա՛ն է որ կը քաւէ բոլոր մեղքերդ,  
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ»  
(Սաղմոս)

Անկողինին մէջ է: Յաւերէն կը տնքայ: Կեանքով մահուան դէմ կը պայքարի: «Սիրտի՛ մարդ» տիտղոսին արժանացած, այժմ սիրտէն վիրաւոր կը տուայտի:

Նախ՝ աղօթեց քաջառողջութեան համար. ապա՝ տառապանքին թեթևացումին համար. ի վերջոյ՝ այս չարչարալից հովիտէն խաղաղ նաւահանգիստ հանգրուանելու համար:

Միրտէն լոյսի նոր ճառագայթ մը կը ցաթի, Տիրոջմով նոր արա-  
բածի այգաբացը կը ծագի:

Կը յիշէ եկեղեցի վերջին այցին լսած քարոզը. «Երբ Յիսուս խաղաղեցուց ծովն ու հովը, ուրիշ նաւեր ալ կային Գալիլիոյ լճակին վրայ. անոնք եւս վայելեցին հրաշքին բարիքը: **Մարդ ծովուն վրայ երբեք առանձին չըլլար:** Մենք հիմա եկեղեցիի խաղաղած նաւուն մէջն ենք»:

Մարմրող հոգիով Երկինքի գահակալին Խօսող գիրքէն էջեր կը թերթատէ. *«Ողորմած, բարեգութ, համբերատար, գթառատ... Օրհնաբանէ՛Տէրր, ո՛վ իմ անձս. Երանելի են անոնք, որոնք Տիրոջ կ'ապաւինին»:*

Չարին ցանցերը պատառոտած, ակնդէտ՝ Կեանքի գիրքին մէջ իր անունը կարդալու յոյսով աչքերը կը փակէ:

Վաղր ոտքի պիտի ելլէ ...:

Լաւալ, 15 սեպտեմբեր 2025

## ԵՐԱՆԵԼԻ ՎԻՃԱԿ

Կեանքն ամբողջ փոխարարելություններու խճճուած ոստայն է՝ մեր խօսք ու գործով հիստուած, եւ յաճախ խեղդակապ:

Կեանքի հունը բնօրրանին առաջնորդող, թաւալզլոր գահավիժումը խափանող եւ խանդաղալից վերաբերմունք պարտադրող երեք իրարանցիկ ծիրեր կուրուագծուին՝ «Հաճիս». «Ներող եղիր». «Շնորհակալ եմ»:

Ապա, հոգատար քառուղին լայնօրէն կը բացուի եւ մարդէ-մարդ առճակատումը հաճութեան, ներողութեան ու շնորհակալութեան գուշին մէջ կը հունձուի:

Երեք սիրագեղ բայեր բաւ են այլեւս վէմքարին վրայ մեղքի մուրհակը այրելու եւ մշտանորոգ հաշտութեան ուխտը կնքելու:

Այսպիսով աշխարհը աստուածահաճոյ եւ մարդամերձ կեանքի իտէալական հովիտ կը դառնայ՝ **«գայլք եւ գառինք ի միասին ճարակեցին»**-ի հոլովակով:

Լաւալ, 27 սեպտեմբեր 2025

## ԱԿԱՆՋԱԼՈՒՐ ԵՐԿՆԱՏՈՒՐ ՊԱՏԳԱՄՆԵՐՈՒՆ

*«Ան որ ականջ ունի՝ թող լսէ, թէ Հոգին ի՛նչ կըսէ  
եկեղեցիներուն» (Յայտնութիւն Յովհաննէսի)*

Գնահատանքի դասական արժեչափը կը սահմանէ. «Մարդ կայ գաւաթին լեցուն մասը կը տեսնէ, մարդ կայ՝ գաւաթին պարապ մասը»:

Այսօրուան նոր մօտեցումը կը շրջէ վերելի սահմանումը եւ կը հրահանգէ. «Պեղէ՛, գնահատէ՛ եւ տօնախմբէ՛ այն դրական իրագործումները, որոնց աճը կեանքը աւելի՛ կը քաղցրացնէ»:

Այս նորիմաց սահմանումը կեանքի վերածելու կամքը կը պրկուի Երկինքէն կախուած եօթը ամպերու շնորհաձիր հոսումով, որ մեզ հաւատակապով եկեղեցիի կը վերածէ:

Առաջին ամպը կանձրելէ. «Համբերութենէն սէր կը ծնի: Սէրը մի՛շտ կը յաղթանակէ: Եկէ՛ք, դրախտին կեանքի ծառէն ճաշակեցէ՛ք»:

Երկրորդ ամպը կը ցօղէ. «Չարչարանքներով կրնաք Բանսարկուն խորտակել: Մահով յաղթեցէ՛ք անցաւոր կեանքին: Անանց կեանքի դափնի՛ն ձեզի կը պարգեւեմ»:

Երրորդ ամպը կը ծորէ. «Կուռքերը փշրելու ժամանակը բնաւ ուշ չէ: Հաւատքով գօտեպնդուեցէ՛ք: Մաքուր քարին վրայ գրուած ձեր անունը կարդացէ՛ք»:

Չորրորդ ամպը կը կաթկթէ. «Հիմա է չար ճամբաներէն դառնալու օրը: Ապաշխարեցէ՛ք: Առաւօտեան աստղը ընծա՛յ ձեզի»:

Հինգերորդ ամպը կը հեղէ. «Արթնութեան մէջ մնացէ՛ք, ընթացէ՛ք, իրարու հսկեցէ՛ք: Ձեր ճերմակ հագուստներով պիտի ընդունիմ ձեզ: Կեանքի գիրքին մէջ պիտի գրեմ ձեր անունները»:

Վեցերորդ ամպը կը սրսկէ. «Ճշմարտութիւնն է կեանքի ճանապարհի բանալին: Ձեր երկրպագութիւնը յաղթանակո՛ւ վ պսակեցի: Դուք սուրբ տաճարիս կենդանի՛ քարերն էք»:

Եօթներորդ ամպը կողողէ. «Ստեղծագործութեանս մէջ գաղջը տեղ չունի: Կրակէն անցած կեանքն է երկինքի ոսկին: Ես է, որ կը բախեմ: Բացէ՛ք ձեր սիրտերուն դուռերը: Ձեզ ինծի սեղանակից պիտի ընեմ»:

Եկեղեցին ձեռամբարձ կաղօթէ. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Աստուած կ'արձագանգէ. «Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ա՛ն է որ զիս կը սիրէ»:

## ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

*«Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն»*  
(Պատարագամատոյց)

Կարելի չէ թափանցել ամենախորհուրդին, ամենասուրբին. նաեւ կարելի չէ անոր անհաղորդ մնալ:

Առեղծուած:

Պատարագը պատարագիչ-պատարագեալ Քրիստոսով հաղորդական կը դառնայ, հոգիները կը լուայ, անսպառ նշխար եւ հրահոսան սկիհ կըլլայ, անկողոպտելի զգեստով կը պաճուճէ եւ անապական կեանք կը պարգեւէ:

Խաչի զենարանին վրայ անարատ Գառնուկը կը գոհուի: Հօր հետ կը հաշտուինք, Սատանային դէմ կը մարտնչինք, մեղքի աղտերէն կը մաքրուինք, փրկութեան նափորտով կը պարսպուինք, արդարութեամբ կը զինուինք, ուրախութեան պատմութեանով կը զարդարուինք, քաւութեան ուրախութեամբ կը ցօղուինք, բարութեամբ կը լիանանք, ծածկեալ խորհուրդին շղարշը կը բանանք եւ քաղցր ձայնով կը գոհաբանենք. *«Տէ՛ր, մենք քեզի կը յուսանք. դուն մեր ամենօրեայ հացը կը բաշխես»:*

**Կուշտ ու կուտ եկեղեցիէն դուրս կ'ելլենք...**

Լաւալ, 30 սեպտեմբեր 2025

## ԱՆԻԻ

Ն. Ք. 5-րդ հազարամեակէն ի վեր, ելամացիներու օրերէն, կոլորուի, կը շրջի, կը պտտի, կը շտապէ, օղակ-օղակ կը քակուի, կ'ազուցուի: Մարդ կը տեղափոխէ, բեռ կը գլանէ, մեռել կը փոխադրէ, ճախարակ կը մանէ, ժամ կը գլորէ, դաշտ կ'ոռոգէ, մամուլ կը չխչխկացնէ, ոլորուն օձի խոհեմութիւն կը յուշէ, արագօրէն կը պարագծէ եւ անընդհատ «Օ»-ին կը հանգչի:

Աստուած, իր բազմած հրեղէն կառքին անիւներուն նման մեր օրերուն արեւ-լուսին անիւները կը դարձնէ:

Մարդոց անիւ-աչքերը, արեան գնդիկները կը դառնան ու կը դառնան:

Երկրագունդը ինք եւս կը դառնայ՝ կեանքի կարուսելը հետը դարձնելով:

Խնդրայարոյց մարդիկ քառակուսի անիւ կը սարքեն. պտուտակները ազատօրէն չեն շրջիր, չեն շրջեր. ձգողութիւնը կը խախտի. հեգասահ ընթացքը կը քարանայ:

Մանկական սայլակի անիւներուն ձայները կը լսեմ — երագ մանկութիւնս կը թաւալի:

Ընտանիք կապած մատանի մը խողովակն ի վար կ'ոլորի: Պատարագի նշխարը կը փշրուի, կը բաշխուի: Սկուն կեանքը կը քալէ, կը վազէ, կը հոսի:

Կլոր գիրեր իրար վրայ կը թափին, կը գնգան՝

Գ, Թ, Ժ, Ծ, Զ, Ը, Յ, Ք, Օ, Ֆ...

Դարաւոր ճշմարտութիւնը կը հաստատէ. **«Յաջողութիւնք կոյր բախտին անւոյ նման հոլովին. իսկ մեծութիւնք մարդկային քան ըզճաղիկ թարշամին»:**

Լաւալ, 1 հոկտեմբեր 2025

## ՏԵՐՈՒՆԻ ՆԵՐՈՒՄ

«Գնա՛ եւ ասկէ ետք մի՛ մեղանչեր» (Յիսուս)

Գերագոյն ներողամտութեան դասը այսօր կը սորվինք՝ նուաստ եւ մեղուցեալ մարդոց կեանքին նոր իմաստ տուած երկնաւոր Վարդապետէն:

Հին ուխտի օրէնքը կուսուցեր. «Իւրաքանչիւր հրեայ իր մահկանացուն պէտք է կնքէ կռապաշտութիւն, ոճիր եւ շնութիւն կատարելէ առաջ»:

Նորօրեայ օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ եւս կը փորձեն սերը սակարկութեան դնել՝ քարը գուրծով փոխարինելու դարանակալ ճիգին մէջ:

Պոռնիկ կնոջ եւ զայն քարկոծելու մոլուցքով լեցուած հեղինակաւոր մարդոց ու ամբոխին փոխարէն՝ ամօթալից Յիսուս գլուխը գետին կը խոնարհեցնէ, դատապարտութեան կեղծ քղամիդը հագած մարդոց մեղքերը կը թուարկէ եւ հոգիին մէջ համաներումի քարտէսը կը գծէ:

Ամեն անձ սխալներ կընէ, մեղքեր կը գործէ, բայց ամեն մարդ անոնց համար պատիժ չի՛ կրեր: «Եթէ կրնաս՝ խուսանաւ» կը յանձնարարէ աշխարհը: «Զղջա՛, ապաշխարէ՛ եւ ուղիղ ճամբէն քալէ՛» կը սորվեցնէ Տէրը:

Շնատամները սրած արնախումներուն եւ սպանութեան խրախճանքով գինովցածներուն, Յիսուս կը հրահանգէ. «Քարկոցեցէ՛ք: Գործադրեցէ՛ք օրէնքը: Բայց... ձեր մէջէն անմեղը թող համարձակի առաջին քարը նետել անոր վրայ: Ինչպէ՞ս պիտի զգայիք եթէ ուրիշներ ձեզ քարկոծէին հոգիի շնութեան համար: Յիշեցէ՛ք նախօրոք ըսածս: Հոգին մարմինէն աւելի արժէքաւոր չէ՞»:

Առհաւական ճշմարտութեան գիծերը զիկ-զակ կը պարեն հորիզոնին վրայ:

Յիսուս եւ կիներ առանձին են՝ դէմ յանդիման: Մեծ գուրծն ու մեծ մեղքը իրարու կը հանդիպին: Արարիչն ու արարածը նոր նայուածքով – հոգիի աչքերով – իրար տեսնեն:

Լռութիւնը կը խզուի տիրական ձայնով. «Ո՛ր եմ քեզ դատապարտողները. մէկ հոգի իսկ քար չնետէ՞ց: Ես ալ հիմա քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մեղք մի՛ գործեր»:

—Չեմ դատապարտեր **հիմա**. յետո՞յ՝ **ասկէ ետք** մի՛ մեղանչեր

Օրէնքի սին հեղինակութեան տիրապետութիւնն ու մեղքը խոր-տակելու եւ մեղաւորը քարկոծելու յանդգնութիւնը կը մանրուին սիրոյ եւ ներողամտութեան իրաւ իշխանութեան ժայռին վրայ:

Տէրունի բառերը կը տաղեն սիրտերը. *«Մարդը մեղքէն գերիվեր է: Ես եկայ եւ մեղքը սպանեցի ու մարդը ապրեցուցի: Ես կը սիրեմ եւ ապա կը ներեմ. մեղքերը կը քաւեմ եւ ապա աւելի՛ կը սիրեմ. անսահման սիրո՞ւ վ կը սիրեմ: Մի՛ դատեք. նախ ձեր աչքին շիւղը հանեցէ՛ք. այն ծանրաքարը որ ուրիշին համար կը կշռեք, նախ ձեր խիղձին նժարին մէջ դրէ՛ք: Մեղքին հակադարձեցէ՛ք գուրով: Բուժեցէ՛ք, ամոքեցէ՛ք, մխիթա-րեցէ՛ք»:*

Յիսուս կը դառնայ կնոջ եւ մտերմաբար կը խրատէ. *«Երկրորդ պատեհութիւնը կը շնորհեմ քեզի, քո՛յր: Կոտրած սիրտը նախապատիւ է ինծի համար՝ քան անտեսուած օրէնքը: Դուն միայն անցեալին չես պատկանիր, այլ՝ ներկային եւ ապագային: Մարդիկ քեզ կը դատա-պարտեն, իսկ ես միայն կը ներեմ: Մեղքի կեանքը մոռնալու եւ անմեղ կեանք ապրելու մարտահրաւերը կը դնեմ դիմացդ: Գնա՛ կեանքդ փոխէ: Մեղաւորէն սուրբը կերտելու հաւատքը կը ցանեմ մէջդ: Գնա՛ ջրէ կեն-դանի սերմերս»:*

Երկինքէն երկիր ազդարարագիր մը կախուած է: Իւրաքանչիւր կեանք անաւարտ պատմութիւն մըն է: Ան կաւարտի Աստուծոյ վերջին դատաստանին դէմ յանդիման գտնուելէն յետոյ միայն: Մինչ այդ, մեղանչում-թողութիւն ձեռք-ձեռքի կընթանան:

Երանի՛ անոր, որ թողութեան սանդիսամատին վրայ կը փչէ իր վերջին շունչը: Ան պիտի լսէ. *«Ապրի՛ւ. Տիրոջ անսպառ ուրախութիւնը ժառանգ քեզի»:*

Լաւալ, 11 հոկտեմբեր 2025

## ՈՂՋՈՂՅՆ

«Աստուած օգնական» — Բարձրեալէն ուժ եւ կարողութիւն:

«Աստուած պահապան» — երկնային պահպանութիւն:

«Օրհնեցէք» — ապաւէն աստուածային:

«Աստուած օրհնէ» — օրհնութիւն վերնական:

«Բարեւ» — աստուածապարգեւ արեւաշաղ:

«Աստուծոյ բարին» — Բարիին հետ կեցութիւն:

«Վրադ ծագի արեւ» — մայրական յուշ:

«Կարօտցանք» — համամարդկային շեշտադրում:

«Կարօտցողը կու գայ» — սիրագեղ ընդառաջում:

«Եկայ *հշտէ*» — սերտ ողջագոյրում:

Եւ տակաւին... «Բարի լոյս», «Բարի կէսօր», «Բարի իրիկուն», «Գիշեր բարի» — անասուներ լուսաւորում եւ արեւաբաշխ պտղաբերութիւն:

Մարդ կայ կ'ապրի ի՛րը գիրացնելու համար եւ մարդ կայ կ'ապրի զի՛րը իրացնելու համար...

Լաւալ, 4 նոյեմբեր 2025

## ՄԵՂՔԷՆ ԽԱԲՈՒԵՑԱՅ

*«Պատրանք աշխարհիս խաբեցին զիս»  
(Ժամագիրք)*

Անձրեւը ողողած է եկեղեցւոյ բակը. տեղ-տեղ ջուր լեցուած է: Կօշիկները թրջելէ խուսափելով Ադամ կը քալէ եւ եկեղեցի կը մտնէ:

Մեծ պահքի ապաշխարութեան աղիողորմ շարականը կ'արձագանգէ եւ զինք աշխարհէն կտրելով՝ խունկի ծուէններուն մէջ պարող թիթեռնիկներու գունագեղ թելերուն աղօթական թափահարումով յաւիտենական Թագաւորին կ'առաջնորդէ:

Արտաշխարհէն ներաշխարհ փոխադրուած կը մտաբերէ մուրով կիտադրուած իր կեանքին մեղսալից հանգրուանները եւ զղջումի ամպը անձրեւ կը ցօղէ հոգիին մէջ:

Մինչ ան երկայնամիտ Տիրոջմէ գրութիւն եւ յանցանքներուն մաքրութիւն կը հայցէ, սիրտին մէջ Սատանան ձեռքը կ'երկարէ եւ ատելութեան խութեր կը ցցէ անոր կենսաճանապարհին վրայ՝ աշխարհիկ ցանկութիւններու գրգիռը հրահրելով:

*«Փրկիչ, մեղք գործեցի»,* կը խոստովանի Ադամ, եւ *«ապաշխարութեան պարգեւդ շնորհէ, ո՛վ Քաւիչ»* կ'աղերսէ:

*«Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն...»* օրհնութեամբ դուրս կ'ելլէ եկեղեցիէն՝ **Սատանան պատրանաթափ թողած:**

Անթիլիաս, 25 փետրուար 2026

ՏՕՆԱԿԱՆՔ

## ԵՐԿՆԱԻՈՐ ՄՍՈՒՐԸ

*«Մանուկ ի գիրկս մեր գգուեցաւ այսօր» (Շարական)*

Այսօր տանս դիմաց գտնուող փոքր հանրապարտեզին մէջ, մշտադալար մեծ ծառին տակ, մէկ ամիս առաջ յարդարուած Սուրբ ծնունդի մսուրը սրիլանքացի բանուորներ քանդեցին եւ *Սուքլին*-ի կանաչ բեռնատարի աղբերուն խառնելով տարին:

Գունաւոր եւ շողշողուն խաւաքարտերը, լոյսերը, արձանիկները, հրեշտակները, զանգակները, եղնիկները, գնդակները ո՞ր գացին:

Գալ տարի նոր մսուր պիտի շինե՞ն, մսուրին առջեւ նկարուող մանուկները նորէն պիտի գա՞ն:

Տուն-խաւաքարտերուն, յոյս-լոյսերուն, խոնարհութիւն-արձանիկներուն, ժպիտ-հրեշտակներուն, երջանկութիւն-զանգակներուն, եռանդ-եղնիկներուն, խաղ-գնդակներուն, խանդ-մանուկներուն սպասող ծառը մնաց՝ մանուկ Յիսուսի գգուանքով զարդարուն:

Շինել-քանդել, քանդել-շինել, այսպէս՝ ժամանակի նոյն խելայեղ վազքը. կեանքը օրէ-օր իր աւարտին կը դիմէ:

Օրուան ընթացքին կեանքի՛ն գացող քանի-քանի՛ ինքնաշարժներ կը սուրան ծառին առջեւէն. քանի-քանի՛ *ամպիւլանս*-ի խաչանիշ ճերմակ/կարմիր եւ մեռելատունի սեւ մարդատար տուփեր նո՛յն կենսայորդ հեւքով իրար կողջունեն:

**Մանուկ Յիսուս, երկնաւոր մսուրէդ հսկէ՛. մարդոց հոգիները չքանդուին. գգուէ՛, թող միշտ կանաչ մնան...:**

Անթիլիաս, 10 յունուար 2014

## ԲԱՑՄԱՆ ԱՂՕԹՔ

*«Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս,  
բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»*  
(Սաղմոս)

Նօրօժ արեղային հոգիէն կը փրթի, հին ու նոր բոլոր հոգիները  
Աստուծոյ կը տանի:

Առաւօտեան առաջին շողերուն հետ Աստուած մեզի կը բերէ, մեզ  
Արարիչին հարազատ զաւակները կը դարձնէ, կը տաճարացնէ:

Անպատում խօսքը շուրթերէ-սիրտեր կ'անցնի. ալելու, սաղմոս,  
շարական, սրբութիւն, գոհութիւն, օրհներգութիւն, մշտաբաց խորան  
մարդընկալ Աստուած անբակտելիօրէն կը գուգորդէ:

**Կեանքի երգն է, Տէ՛ր, երախտիքի այս հծծիւնը. «զարթուցեալքս» մեր  
բերնէն ականջիդ հասնող, մեզ իրար զօդող:**

Անթիլիաս, 20 յունուար 2014

## ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ

*«Եկեալքս ի մտանել արեգականն  
տեսաք զլոյս երեկոյիս»  
(Ժամագիրք)*

Կիակմուտքի դողանջ-հրաւեր, աստուածակոչ տիրական մագնիս,  
բո՛ց ճրագի, լո՛յս կենդանի:

Մինչ արեւը քուն կը մտնէ, երեկոն սիրտերուն մէջ զուարթ լոյսը  
կը վառէ:

Հրեշտակական անդորր, զուարթուն թեւաբախում, զուարթերես  
սրբութիւն:

Տաճարը լոյս կը բաշխէ...

Երկնայիններ եւ երկրայիններ լոյս-երգը կ'ըմպեն:

Աստուած անդադար կը փառաւորուի. հոգեզուարթ պահը մեզ  
մինչեւ կիրակի կը տանի:

**Տէ՛ր, սքանչելի լոյսիդ աղօթարան դարձուր մեր հոգի-տաճար-  
ները՝ գիշեր-ցերեկ — յաւիտեան:**

Անթիլիաս, 21 յունուար 2014

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

*«Քառասնորեայ տղայ եւ Տէրն ... եկն ի տաճարն:  
Եւ Սիմէոն զգուեր գրկօքն» (Ժամագիրք)*

Տունդ այսօր, Տէ՛ր, մանուկներով կը յորդի: Կարմրուկ այտերէն նուռ կը ցոլայ: Լաց եւ ծիծաղ կ'արտաբխին:

Հայ Մարիամներ իրենց ձագուկները քեզի կ'ընծայեն, Սիմէոն ծերունիներ հայորդիները ողկոյզ առ ողկոյզ սուրբ սեղանիդ կը բերեն եւ զգուանքիդ կը յանձնեն:

Լոյսդ կը շողայ գմբէթէն, մոմերէն, աչքերէն...

Կրակ են հոգիները, Տէ՛ր, անշէջ խարոյկ՝ սիրովդ վառ:

Շարականները կը հոսին, աղօթքները կը բխին, մայր եւ զաւակ իրար կը գրկեն:

Քեզի հետ մեզ եւս, բոլո՛րս, Հօրդ ընդ առաջ տար այսօր եւ միշտ:  
**Օրհնեալ գիրկդ ա՛ռ մեզ.** պի՛նդ սեղմէ, պահէ, պահպանէ. յաւիտե-  
նական կեա՛նքդ պարգեւէ:

Անթիլիաս, 16 փետրուար 2014

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

*«Մեղաք այսօր խորհրդով, բանիւ եւ գործով» (Ժամագիրք)*

Անկողին մտած՝ աղօթաձայն զղջումով ծածկատես Աստուծոյ կը քանայ սիրտին գաղտնիքները: Կեանքին պաղն ու տաքը կը տողանցեն աչքին դիմաց: **Խոստովանութիւնն ու ողորմութիւնը կ'ողջագործուին:**

Մեղքին լեռնաշղթան հալեցնելով՝ անվրդով խաղաղութիւնը կը գրկէ: Մինչեւ առտու հանգիստ կը քնանայ:

Երեկի մեղքերու կայլակը նոր այսօրը չի՝ կրնար աղարտել: Նոր մարդը ծնած է. ան յաւիտենականութեան կ'երթայ:

Տէրունի պատուիրաններուն քաղցր լուծը շալկած՝ կ'արթննայ արդարութեան գործերու լծուելու ուրախութեամբ...

Ապաշաւի եւ մեղքերու քաւութեան ժամադրութիւնը յարգուած է:

Լաւալ, 25 դեկտեմբեր 2014

## ՄԵԾ ՊԱՀՔ

Աղօթքով մտանք, աղուհացով ապրեցանք, ողորմութեամբ լուաց-  
ւեցանք, մեղքերուն որդը սպանեցինք, հոգին մարմինի գերութենէն  
ազատեցինք:

*«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն».*  
քար, հաց, հրեշտակ, փառք, Աստուած, Սատանայ, մեր շուրջը վխտա-  
ցող սա, դա, նա. ասոնք, ադոնք, անոնք, զմեզ, մենք, բոլորս — զմեղս:

Ապաշխարութիւն, գիտակցութիւն, ինքնաքննութիւն, մաքրութե-  
իւն, զղջում, որոշում, հատուցում, մեկնում:

*«Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից».*

Ամեն տարի՝ նոյն ընթացքով, նոյն հաւատքով, նոյն արդիւնքով,  
արեւագալով ու հսկումով, մեղայով ու արձակումով:

*«Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու».*

Սուրբ աւանդ — Միուած եօթը փետուրով՝ *խառնադօնճօլօզ* խոշոր  
սոխ...

Լաւալ, 26 մարտ 2021

## Ս. ԶԱՏԻԿ

*«Սուրբ, մեծի յարութեանն Քրիստոսի՝  
վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ»  
(Ժամագիրք)*

Երկու քոյր զուարճացեալ՝ *տէտէ-նէնէ*-ին տունը գացին, հրեշտակի, խաչի, նապաստակի կաղապարով զատիկի *քէխկէ* թխեցին, տուն եկան, հաւկիթ ներկեցին, կարմիր-կապոյտ-նարնջագոյն հաւկիթ խաղցան, *քէխկէ* կերան, հաւկիթ կոտրեցին՝ *«Քրիստոս յարեալ ի մեռելոց»* մաղթելով անկողին մտան:

Քորոնածահրը արգիլեց եկեղեցի երթալ, իրենք եկեղեցին տուն բերին, *«մահուամբ զմահ կոխեցեր»* խորհուրդը բացի՞ն, հաւատացին, աղօթեցին, երգեցին. *տէտէ-ն, նէնէ-ն, մամա-ն*, քեռին սիրեցին:

Յետոյ խաղցան, *թիվի* դիտեցին, *այֆօն*-ով զբաղեցան, գիրք կարդացին, գծեցին, սրբեցին, պուպրիկները գգուեցին, եւ զատկուան արձակուրդէն ետք՝ ցատկոտելով դպրոց գացին:

Տէ՛ր Աստուած, ի՞նչ կ'ըլլայ՝ աշխարհիս բոլոր փոքրիկներուն հոգիին մէջ փթթող Յիսուսի՛ն հաւատքով մեզի ըսել տուր. *«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»*:

Լաւալ, 6 ապրիլ 2021

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

*«Զարդարեա զառագաստ քո Միոն» (Շարական)*

Նոր Միոնի բողբոջները կանաչագարդած են վանքը:

Մումեր, ծաղիկներ, մանուկներ կը խողտան աչքերուս դիմաց, կը թափանցեն սրտիս մէջ՝ սպիտակ հեգութեան թւերով, խաղաղութեան ոստին պարերով, թագաւորներու Թագաւորը անգամ մը եւս ողջունելու խինդով:

*«Ո՛վ է սա թագաւոր փառաց»,* կ'արձագանգէ տաճարին մէջ: *«Օփ-նեալ եկեալ անուամբ Տեառն»* կ'որոտան երկինքն ու երկիրը — պատ-րա՞ստ ենք անյաղթ Արքան մեր հոգիներու տապանակին մէջ ըն-դունելու:

Երուսաղէմ եմ այսօր՝ յուշերու թւերուն անձնատուր. հո՞ն է հիւծած ծերերէն եւ մատղաշ փոքրիկներէն Փառատրեալը:

Հոս է, հոն է, ամեն տեղ է ... Երանի՛ տեսնող աչք ունեցողին. երանի՛ լսող ականջով օժտեալին. երանի՛ Տիրոջ աջը համբուրողին, **երանի՛ յաւիտեանս Աստուծոյ հետ մնացողին:**

Անթիլիաս, 10 ապրիլ 2022

## ՎԱՌԼԱՊՏԵՐՆԵՐԸ

*«Ելին ընդ առաջ երկնաւոր փեսային  
վառեալ լապտերօք» (Շարական)*

Հինգ իմաստուն, հինգ յիմար աղջիկներ կանգնած են եկեղեցւոյ  
ատեանը՝ ունկնդիր Յիսուսի լուսաբաշխ առակին:

Ամեն տարի նոյն տրամբ կը կրկնուի՝ մինչեւ երկրորդ գալուստը  
արդար դատաւորին:

Ո՞վ քախտաւոր հինգին մէջ է, ո՞վ միւս անքախտ հինգին մաս կը  
կազմէ — կարելոր չէ. հոս իմաստնանալու պատգամ է, հոն՝ անդարձ  
վճիռ: Իմաստունն ու յիմարը միայն Աստուած գիտէ հոս եւ հոն:

*«Վառեցէք տասը մոմերն ալ», կը հնչէ երկնային ձայնը, «Իմաս-  
տութեան ձէթս կը բաւէ բոլորիդ...»:*

Հայ աղջիկներն ու իրենց մայրերն տուն կ'երթան. հիմա միայն  
Լուսաւորչի կանթեղին լոյսը կը պսպղայ՝ երկինքի ճամբուն ուղղելով  
քայլերն համայն հայութեան:

Անթիլիաս, 12 ապրիլ 2022

## ՄԱՔՈՒՐ ՈՏՔԵՐ

*«Լուս, եւ քան զձին սպիտակ եղէց»*  
(Սաղմոս)

Ամեն տեղէն սպիտակութիւն կը մաղուի, երբ ջուրը կը լեցուի տաշտին մէջ՝ առաքեալներ սրբելու խորհուրդը քակելով եւ հաւատացեալները Տիրոջ մերձեցնելով:

Տասներկու տղաք են բեմին վրայ՝ աշակերտ Քրիստոսի խոնարհութեան պատուիրանին: Գիտեն, թէ կանչուած են սրբանուէր կեանքի մը՝ Դպրեվանքէն անցնելով ժողովուրդին երթալու:

Երուսաղէմի վերնատունէն հոս եկած մեզի հետ է ընտրեալ Տասներկուքը, իր հետ բերած բանակը մեր սուրբերուն եւ հերոսներուն՝ մաքրակենցաղ գնացքի ջերմ հրաւեր բոլորիս:

Այս բոլորին վերեւ կը սաւառնի անճառելի տեսիլքը երկինքի հրեղէն կառքին բազմած Աստուծոյ, խմբած մեզ իր սիրովը անեղծ՝ միշտ հեզ ու սուրբ ուխտին կապած:

Երկնատունը հոգեւորնին զօղած լոյսի ցնցուղ սանդուխը մեզ կը տանի վեր...

**Տէ՛ր, օրհնէ քեզի եկող ոտքերը մեր, մաքրէ մեղքի կեղտէն:**

Անթիլիաս, 14 ապրիլ 2022

## ԽԱԻԱՐԻՆ ԼՈՅՍԸ

*«Աստուած մարմնով վասն իմ խաչեալ»*  
(Ժամագիրք)

Գիշերը կիսուած է: Խաւարը պատած է ամբողջ տաճարը: Յիսուս-  
մումը կը լուսաւորէ թմրած հսկողները:

Կարդացուած են աւետարանները, պատմուած են մատնութեան  
եւ խաչելութեան դրուագները, կապուած են աղօթական թելերը:

Արարիչ-արարած, Փրկիչ-փրկեալ, Ամենարդար-մեղաւոր, Սէր-  
ատելութիւն, Համբոյր-սրատում, Ամենառատութիւն-արծաթսիրութիւն,  
Վերջին ընթրիքի համախմբում-Գերսեմանիի պարտեզի ցրում եւ Գող-  
գոթայի խաչափայտի կոթողում՝ իրարու հետ կը ճակատին:

Տաճարը լոյս կը զգենու, լացի գիշերը հրճուանքի լուսածագի կը  
վերածուի՝ խաչէն արիւն կը կաթի հոգիներու սրուակին մէջ եւ **մեղ-  
քերու կրակը կը մարէ...**

Անթիլիաս, 14 ապրիլ 2022

## ՉԷ ՄԵՌԵԱԼ

*«Կենդանատուն ամենեցուն այսօր  
դընի ի նոր գերեզմանի» (Շարական)*

Ծաղկաստան է ահա գերեզմանը Տիրոջ — խունկ, մոմ, խաչ, աղօթք, շարական: Փոխան արցունքի ժպիտ կը տիրէ, մեծին-պզտիկին առաւել լ կեանք կը բաշխէ:

Առ յաւէտ գլորուած է գերեզմանի դուռին դարպաս-քարը — բաց հրաւեր՝ երկինք մուտքի: Հրեշտակներ կը թւածեն արդարներ կը ճեմեն, սուրբեր-սրբուհիներ մեզ կը դիմաւորեն:

**«Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս»** կանխասացութիւնը կ'արձագանգէ հոգիներուն մէջ:

Ծաղիկներ ձեռին դուրս կ'ելլենք տաճարէն — բարի գործերու ծաղկեփունջով օր մը Տէրը դիմաւորելու հաստատ քայլերով:

Մի քանի օրէն ծաղիկներէն թորմած յիշատակ կը մնայ. **«Ընդ մեզ է Աստուած»** — Տիրոջ հետ ըլլալու մշտաթարմ ուխտը միայն կը տեսէ...

Անթիլիաս, 15 ապրիլ 2022

## ՅԱՐՈՒՑԵԱԼ Է ՏԵՐՆ

*«Զուարճացեալքս մեծաւ ուրախութեամբ  
աւետեօք յարութեան Տեառն մերոյ եւ Փրկի-  
չին Յիսուսի Քրիստոսի» (Ժամագիրք)*

Քրիստոնեային գերագոյն ուրախութեան պահն է Քրիստոսի յարութեան տօնախմբութիւնը՝ քառասուն օր «Քրիստոս յարեալ» աւետիսին մատթանքով լի:

Փրկիչին մահը մահկանացուներու մահը խափանեց, մեղքին մուրհակը պատառեց, ժամանակաւորը անժամանակին առաջնորդեց, մեզ այս աշխարհէն Հօրը քով փոխադրեց:

Յարուցեալով յաւիտենական փրկութեան հրաւերը ստացած, Սուրբ Հոգիին շնորհներով զարդարուած, լոյսի զաւակներս կը դիմենք Տիրոջ՝ երկիրի չարութիւնը երկինքի բարութեամբ լեցնելու խնդրանքով:

Գլորուած է քարը գերեզմանին բերանէն, խլուած է կեանքը մահւան երախէն — յաղթած է մարդը, զգետնուած է մեղքը:

**Յիսո՛ւս, յարութեանդ շողերով միշտ հովանաւորէ մեզ...**

Անթիլիաս, 17 ապրիլ 2022

## ՀԱՄԲԱՐՁԱԻ ՏԵՐՆ ՄԵՐ

*«Եղ յամպս ըզգընացս իւր եւ վերասլացաւ  
առ Հայր ի յերկինս» (Շարական)*

Ձիւն-լոյս ամպեր կը թեւածեն, Յիսուս երկինք կը համբառնայ:  
Տէրը կ'երթայ, ամպը կը յամենայ:

Առաքեալներ պիշ-պիշ վեր կը նային, մշուշին մէջ Վարդապետը  
կը փնտռեն:

**Նորէն պիտի գա՞յ...**

Դատաւո՞ր արդար, անպատում աթոռիդ յարած են աչքերս: Քա՛ջ  
գիտեմ. պիտի գաս: Անհամբեր կը սպասենք, շշունջներ կը լսենք՝ *«որ  
եկիր եւ գալոցդ ես...»*:

Գալուստդ բարի — վերհամբարձման վիճակը ինծի պիտի ելլէ՞:

Տէրունի հրաշագեղ լուսազարդումը մեր խաւարած էութիւնը կը  
հոգեզարդէ:

Սպիտակ մարմարեայ սրահիդ մէջ անթիւ ամբիժ հոգիներ հրեշ-  
տակներուն թեւանցուկ կը պարեն:

Անթիլիաս, 31 մայիս 2022

## ՇՆՈՐՀԱՀՈՍ

*«Առատաբուլի Հոգի շնորհաց»*  
(Ժամագիրք)

Եկեղեցւոյ բաց դռներէն եւ պատուհաններէն հրահոսան ներս կը խուժեն Սուրբ Հոգիին եօթը շնորհները — կաթ ու մեղր կը բխի:

Եօթնարփեան ճառագայթներու խուրձով աստուածաստեղծ չորս տարրերը նո՛ր կեանքը կը բաշխեն:

Հրագինեալ ընտրեալներ, անկէզ մորենիով վառ, բազմալեզու, շնորհագարդ, երկրէ-երկիր կը դրկուին:

Առաքելական կոչումը կը պարուրէ աշխարհն համայն՝ հոգեւորը աշխարհիկէն առաւել սիրելու իմաստութեամբ, ամբաւ փառքը ըմպելու երկիւղածութեամբ, քրիստոսատուր կեանքը ապրելու յանձնառութեամբ, բարին ընտրելու եւ չարը վանելու արիութեամբ, աստուածգիտութիւնն ու աստուածմեծարութիւնը ցոլացնելու առաքինութեամբ:

Շնորհներո՛ւ բաշխիչ, սիրոյ, երջանկութեան, խաղաղութեան, համբերութեան, ազնւութեան, բարութեան, հաւատարմութեան, առատաձեռնութեան եւ խոնարհութեան պտուղները Քրիստոս-որթատունկին վրայ աճեցուր, շնորհներուդ անձրեւով մշտաթա՛րմ պահէ, զայն միշտ մեզի պարգեւէ — երկնային բաց դարպասէդ մուտք գործող աղաւնիին թելածումով...

Նոր գինին կը հոսի աստուածահաճոյ կեանքի ովկիանին մէջ. **հաւատքի գինովութիւնը ընդունական է:**

Անթիլիաս, 6 յունիս 2022

## ԼԵՌԱՆ ՎՐԱՅ

*«Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում  
կամ ո՞վ բնակեցէ ի լեռն սուրբ քո»  
(Սաղմոս)*

Հեթանոս յիշատակներ, թոշնած վարդեր, թելաթափ աղաւնիներ,  
քարացած ջրվեժներ:

Լեռ, եւ Վարդապետին կողքին երեք աշակերտներ. ամպէն վար  
երկու մարգարէներ:

Բիւրեղ ձայնը կը զնգայ...

— Ո՞վ արժանի պիտի ըլլայ սուրբ լեռանդ վրայ լարուած տաճար-  
վրանին տակ բնակելու:

Ամբիժ կեանք, արդարութիւն, ճշմարտութիւն, բարութիւն եւ սէր  
կը պղպջան, կը վառին, կը պայծառագարդեն:

Արդէն դուրսն ենք Թաբոր լեռ-եկեղեցիէն. ջուրին հետ Աստուծոյ  
բիր օրհնութիւնները կողողեն մեզ:

Մանուկներ կը ճռուողեն, փառքդ կերգեն, Տէ՛ր:

Լաւալ, 25 յուլիս 2022

## ՄԱՅՐ ՈՐԴԻՈՎ ԲԵՐԿՐԵԱԼ

*«Մայր սուրբ սքանչելի լուսոյն ... ցնծութիւն  
աշխարհի ծնար զԲանն Աստուած»*

(Ժամագիրք)

Հաւատքի այգեկութիւն է: Ուխտաւորներ, խաղողօրհներ, մատաղ-  
օրհներ: Հին վանքերու անցելայուշ բերկրութիւն:

Մանուկ Յիսուսի երկնաբարձ սրբուհի մա՛յր, ուսանելի լռութեամբդ մեր քաղցեալ հոգիները կեանքի հացով կշտացուր, ծարաւ սիրտերը կեանքի ջուրով լեցուր. մեզ զաւակիդ հետ գիրկդ առ, Բարձրելոյն զօրութեամբ հովանաւորէ, տաղաւարէ, մաքրագործէ:

Ամբիժ շրթներով կը դիմենք քեզի, կենաց ծառին վրայ ծաղկեցուր մեզ, մեղքի փուշերէն զերծ անդաստան դարձուր, անսպառ ուրախութիւնդ որպէս երկնային ցօղ անձրեւէ, շնորհագարդէ, լուսազարդէ, հոգեզարդէ:

Երկնային գանձին բանալի, անսերմնական յղութեանդ, անարատ մայրութեանդ, **յետ ծննդեան անապական կուսութեանդ փակեալ դուռը բաց...**

Պիքֆայա, 25 օգոստոս 2022

## ԽԱՉՆ ԿԵՆԱՐԱՐ

*«Շնորհեա խնդրողացս ի քէն զամենայաղթ  
զօրութիւն սուրբ խաչի քո» (Շարական)*

Կարմիր հետքեր ճամբան դէպի դուրս կը գծեն...

Ծայրը ծաղկեալ խաչն է, պատարագեալ Գառն Աստուծոյ չկայ  
վրան — Քրիստոս յարուցեալ է:

Ա՛յս է հայուն պահապան խաչը, կեանքի ծառը՝ յարութեան յոյսով  
նաշխուած:

Խաչ-անիւ: Խաչ-աթոռ: Խաչ-թագ: Քառաթել բարձրադիտակ —  
աշխարհացրիւ հայութիւնը խմբող, պարսպող, նշող, քրիստոնէացնող,  
երկնայնացնող:

Եկեղեցիին մէջն եմ: Խաչերու պարտէզ է՝ մինչեւ գագաթը սրբութեան  
սեղանին:

Զօրութեան աղբիւր, մեղքերէ մաքրութեան աւազան, երկինք  
բարձրացող սանդուխ, **անդատապարտ ողջագործում Փրկիչին հետ...**

Լաւալ, 20 սեպտեմբեր 2022

*«ԱՄԵՆ ԻՆՉ ՎԵՐՁԱՅԱԾ Է»*

Գողգոթայի խաչին վրայէն արտասանուած տէրունի խօսք.  
աւարտ երկրաւոր տոամի, սկիզբ երկնասլաց ճանապարհի:

Մեղքի մուրհակը վճարուած է մինչեւ վերջին դահեկանը:

Պատեցէք թղթեղէն պարտատէտրերը, բացէք ձեր հոգիներուն  
դուռերը. փառքի թագաւորը կը բախէ. բացէ՛ք:

Չարը բարիով խորտակուած է:

Խաչը սիրտերու մէջ թագաւորած է:

Հոգին մարմինին յաղթած է:

Ձայներ կը լսուին:

Քալէ՛: **Նոր երգի թափօրը վերջին սկիզբը կ'աւետէ...**:

Լաւալ, 17 սեպտեմբեր 2025